

## Ամալ Գլուցի Պիտի Զբաղուի Յայոց Զեղասպանութեան Դատով

Հոլիվուտի յայտնի աստղերէն՝ դերասան ձորճ Գլուցի կինը՝ Ամալ Գլուցի, որ մարդկային իրաւունքներու փաստաբան է, պիտի գրադուի Հայոց ցեղասպանութեան հարցի շուրջ աղմուկ հանած հարցով, որ կը գտնուի Մարդկային իրաւունքներու եւրոպական Դատարանին (ՄԻԴԱ) առջեւ:



Իրաւաբան Ամալ Գլուցի

Այս մասին անդրադառնալով, բրիտանական «The Telegraph» թերթը կը գրէ, որ 1915 թուականի Հայոց ցեղասպանութենէն շուրջ 100 տարի ետք, որու ընթացքին օսմանեան թուրքերը մինչեւ 1.5 միլիոն հայ սպաննեցին, ձորճ Գլուցի նոր կինը ներառուած է Հայոց ցեղասպանութիւնը հերքող թուրք քաղաքական գործիչ Դոդու Փերինչէքի՝ Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանէն ներս Հայաստանի շահերը ներկայացնող իրաւաբանների խումբին մէջ:

«Հայերը կը պնդեն, որ ցեղասպանութեան հերքումը պէտք է յանցագործութիւն համարուի, ինչպէս վեց միլիոն բռեաներու Հոլոքոստի հերքումը բազմաթիւ երկրներու մէջ քրէյթօրէն պատժելի յանցագործութիւն կը նկատուի: Անոնք կ'ըսեն, որ Ստրասպուրկի դատարանի դատաւորները շարք մը իրաւական եւ փաստական սխալներ թույլ տուած են, չեղեալ համարելով Փերինչէքի սկզբնական դատավճիռը», - կը գրէ բրիտանական թերթը:

Ըստ «The Telegraph»-ի, Ամալ Գլուցին պիտի աշխատի իր դեկավարի՝ թագաւորական փաստաբան ձեֆրի Ռոպերթսընի հետ միասին: Լոնտոնի փաստաբանական գրասենեակը թերթին հաստատած է այս գործով անոնց մասնակցութեան փաստը:

Թերթը նաեւ կը յիշեցնէ, որ

Ռոպերթսոն վերջերս գիրք մը հրատարակած է «Անյարմար Զեղասպանութիւն. Ո՞վ հիմա կը չիշէ հայերու մասին» խորագիրով: Հոկտեմբերին հրատարակուած գիրքը կ'ապացուցէ, որ 1915-ի սարսափելի իրադարձութիւնները, անկասկած, մարդկութեան դէմ յանցագործութիւն են, որ այսօր յայտնի է որպէս ցեղասպանութիւն:

Յիշեցնենք, որ 2008 թուականին, Չուրիցերիոյ դատարաններէն մէկը, Թուրքիոյ Աշխատաւորական Կուսակցութեան առաջնորդ Դոդու Փերինչէքին դատապարտած էր Հայոց ցեղասպանութեան ժխտման համար: Փերինչէք դիմած է ՄԻԵԴ, եւ 2013 թուականի Դեկտեմբերին դատարանը բաւարարած է անոր դիմումը: Չուրիցերիա բողոքարկած է ՄԻԵԴ-ի որոշումը, որմէ յետոյ Հայաստան եւս դիմած է նոյն դատարան եւ ներկայիս հանդէս կու գայ որպէս երրորդ կողմ եւ Հայաստանի շահերն է որ պիտի ներկայացնէ յայտնի փաստաբաններու խումբը՝ Արաբ Լիբանանցի Ամալ Գլուցիի մասնակցութեամբ:

## Ահաւոր Ռճիր Կիւմրիի Մէջ Մէկ Ընտանիքի Վեց Անդամներ Սպանուած Են Ռուս Ծառայողի Սը Կողմէ



Ոճրագործութեան զոհ՝ Աւետիսեան ընտանիքի վեց անդամներու յուղարկաւորութեան ընթացքին

Հայաստանի երկրորդ մեծագոյն քաղաք՝ Կիւմրիի մէջ Դեկտեմբեր 12-ին տեղի ունեցաւ ահաւոր ոճիր մը: Քաղաքի Միասնիկեան փողոցի տուններէն մէկուն մէջ գոհուեցան Աւետիսեան ընտանիքէն 6 անդամներ:

Չուրիցէն 5-ը եղած են չափահասներ, իսկ մէկը՝ մանկահասակ երեխայ: Միջադէպը արեւածագին բացայայտեց ընտանիքի հարեւանը, որ սուրճ խմելու եկած էր: Իսկոյն միջադէպի վայր ժամանեցին ապահովական ուժեր, որոնք նախնական հետաքննութեան ընթացքին բացայայտեցին սպանդէն փրկուած 6 ամսական մանուկ մը, որ ծանրօրէն վիրաւորուելով փոխադրուած է հիւանդանոց եւ ենթարկուած վիրաբուժական գոր-

ծողութեան: Ան կը գտնուի վերականգնման բաժնի մէջ: Վերապարծ մանուկը գտած են մօր դիակին մօտ: Ոճրագործը հաւանաբար ենթադրած է, որ երեխան եւս մահացած էր: Գլխաւոր կասկածեալը՝ Հայաստանի մէջ ծառայող ռուս զինուոր վալերի Պերմիաքովն է:

24 ժամ չանցած Կասկածեալ զինուորը ձերբակալուեցաւ ռուս սահմանապահ ուժերուն ձեռամբ, երբ կը փորձէր հատել Թուրքիոյ հետ սահմանը: Ձերբակալութենէն ետք ան փոխադրուեցաւ ռուսական գորանոց: Հարցաքննութեան ընթացքին ան ստանձնեց ոճիրը կատարելու պատասխանատու-

Շար.ը էջ 4

## Ամերիկեան Համալսարաններ Կը Գտնուին Թուրքերու Կողմէ Կազմակերպած Գիտաժողովի Սը Հովանաւորներու Շարքին

Ամերիկեան եւ այլ երկիրներու շարք մը համալսարաններ որպէս հովանաւոր կը ներկայանան թրքական «Ալտենիզ» համալսարանի կողմէ կազմակերպուելիք գիտաժողովի մը, որ յատկօրէն կը միտի կասկածի տակ առնելու հայկական ցեղասպանութեան փաստը:

Այս տարուայ Ապրիլին Անգարայի մէջ տեղի ունենալիք գիտաժողովին որպէս հովանաւորներ կը յիշուին Քալիֆօրնիոյ Նահանգային Նորթրիճ Համալսարանը, ուր կը յաճախեն շատ մեծ թիւով հայ ուսանողներ, Թէքսասի Համալսարանը, Օհայոյի Պետական Համալսարանը, Արիզոնայի Համալսարանը, Նիւ ձըրքիի «Ռաթկլըրդ» Համալսարանը եւ այլ համալսարանները Գերմանիայէն, Աւստրիայէն, Ռուսաստանէն, Ճա-

փոնէն, Ատրպէյճանէն, Վրաստանէն եւ այլ երկիրներէ:

Թէեւ գիտաժողովը կը փորձէ ներկայանայ որպէս ժամանակաշրջանի պատմութեան լուրջ քննարկման սեմինար, սակայն Հայաստանէն ոչ մէկ պատմաբան չէ հրաւիրուած մաս կազմելու գիտաժողովին:

Այս առթիւ ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ Սեւակ Խաչատուրեան ցաւ յայտնեց, որ Ամերիկեան յարգուած համալսարաններ ներգրաւուած են պատմութիւնը խեղաթիւրելու ձգտող այս գիտաժողովին մէջ, զայն կազմակերպելով Ապրիլ ամսուայ ընթացքին, այն պահուն երբ Հայ ժողովուրդը եւ յառաջողութեամբ մտաւորկաններ կը նշեն ցեղասպանութեան 100-ամեակը:

## ՄԴՀԿ-ն Կոչ Կ'ընէ Դուրս Գալ Բանակցային Գործընթացէն

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի շրջանի վարիչ մարմինը հաղորդագրութեամբ մը կոչ ուղղեց հրաժարելու դարաբաղեան հարցի լուծման բանակցային գործընթացէն, Ատրպէյճանի կողմէ զինադադարի մնայուն խախտումներուն պատճառաւ:

Կուսակցութեան տարածած յայտարարութեան մէջ ըսուած է. «2015 թուականի սկզբից Ատրպէյճանը կրկին շարունակուած է լարուածութեան աճն ու արկածախնդրութիւնը Հայաստանի եւ Արցախի սահմաններում:

«Ճիշդ է, հակառակորդի բոլոր գործողութիւններին մեր Զինուած Ուժերը տալիս են շատ խիստ պատասխան, սակայն պաշտօնական Պաքուի արկածախնդիր գործողութիւններին հետեւանքով զոհուած են նաեւ մեր զինծառայողները: Աւելին, Ատրպէյճանը շարունակուած է ամէն օր աւելի մեծ սպորանքների դիմել, օգտագործելով անօդաչու սարքեր եւ տարբեր

տրամաչափի զէնքեր, այս կերպ խախտելով իր իսկ կողմից 1994 թուականին խնդրած զինադադարը: Չնայած առկա իրավիճակին, միջազգային հանրութեան կողմից իբրեւ միջնորդ մանդատ ստացած ԵԱՀԿ Մինսկի խումբը ուղղակի չի տիրապետում իրավիճակին, ոչ մի կերպ չկարողանալով ազդել պաշտօնական Պաքուի գործողութիւնների վրայ:

«Ելնելով վերոնշեալից, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը կոչ է անում Հայաստանի իշխանութիւններին դուրս գալ բանակցային գործընթացից, պահանջելով ԵԱՀԿ Մինսկի խումբի համախաղաղ երկրներին իրական ճնշում գործադրել պաշտօնական Պաքուի վրայ՝ սպորանքների չդիմելու պահանջով: Անտրամաբանական է Հայաստանի մասնակցութիւնը բանակցային գործընթացին, երբ սահմանին Ատրպէյճանը շարունակուած է իր արկածախնդիր գործողութիւնները», - ըսուած է ՄԴՀԿ յայտարարութեան մէջ:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Երբ ՀԱԿ-ն է «փողոցում ընկած», բայց վերցնող չկայ

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ինչպես յայտնի է, Յունուարի 20-ին ԲՀԿ առաջնորդ Գագրիկ Ծառուկեանը հրաւիրելու է ոչ իշխանական քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնությունների եւ շարժումների խորհրդատուներ, որոնք քննարկուելու է երկրում ստեղծուած քաղաքական, տնտեսական բարդ վիճակը: Դա լինելու է խորհրդակցական բնույթի միջոցառում, որի նպատակն է վերլուծել, ամփոփել արդէն իսկ կատարուած ծաւալուն աշխատանքը, քննարկել յետագայ անելիքներն ու քայլերը: Դեռ Դեկտեմբերին Ծառուկեանի մամուլային խոսնակ իվետա Տօնոյեանն ընդգծել էր, որ դա ոչ թէ ԲՀԿ-ի միջոցառումն է, այլ՝ Գագրիկ Ծառուկեանի անձնական նախաձեռնությունը:

Օրերս 168.am-ը յօդուած էր հրատարակել՝ սեփական աղբիւրներին յղում անելով տեղեկացրել, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանը որոշել է չմասնակցել Յունուարի 20-ին Գագրիկ Ծառուկեանի կողմից կազմակերպուող համաժողովին: Տէր-Պետրոսեանը ՀԱԿ-ի չմասնակցելու որոշումը պայմանաւորել է իր անձնական ամբիջիաներով՝ յայտարարելով, որ իրեն վայել չէ գնալ եւ նոյն շարքում նստել Գառնիկ Իսաղուլեանի, Տիգրան Կարապետեանի կամ Արամ Յարութիւնեանի հետ: Ըստ կայքի՝ Լեւոն Տէր-Պետրոսեանն աւելացրել է, որ իրենք կը սպասեն համաժողովի արդիւնքներին, կը տեսնեն, թէ համաժողովի ժամանակ ինչ որոշում կը կայացուի, որից յետոյ կը յատակցեն իրենց յետագայ անելիքները: Խօսելով ապագայի մասին՝ Տէր-Պետրոսեանը յայտարարել է, որ եթէ անգամ եռեակի իրենց միւս գործընկերները որոշում չկայացնեն կամ փորձեն հրաժարուել համատեղ իշխանափոխութիւն իրականացնելու սցենարից, ապա ՀԱԿ-ը պատրաստ է միայնակ գործել: Տէր-Պետրոսեանը հասկացրել է, որ Ծառուկեանի համաժողովից յետոյ իրենք եւս կը հաւաքուեն եւ որոշում կը կայացնեն եւ հասկացրել է, որ ամենաուշը Փետրուարի վերջին՝ Մարտի սկզբին իրենք պատրաստ են Ազատութեան հրապարակում միայնակ հանրահաւաք անցկացնել եւ հրապարակից տուն չգնալ՝ մինչեւ իշխանափոխութիւն չի իրականացնեն: «Տէր-Պետրոսեանը խօսել է ոչ միայն ապագայի, այլ նաեւ անցեալի մասին՝ յայտարարելով, որ 2014թ. Հոկտեմբերի 10-ի եւ 24-ի հանրահաւաքներից յետոյ Հայաստանում իշխանութիւն չկար, իշխանութիւնը փողոցում ընկած էր, մնում էր միայն այդ իշխանութիւնը վերցնել: Տէր-Պետրոսեանը յայտարարել է, որ եթէ ԲՀԿ-ն հաստատուն կանգնէր, եւ ՀԱԿ-ի հետ միասին կազմակերպէին Հոկտեմբերի 31-ի, Նոյեմբերի 7-ի եւ 14-ի հանրահաւաքները, որոնց մասին իրազեկումներն արդէն տրուել էին քաղաքապետարանին, ապա ինքը կասկած անգամ

չունէր, որ Հայաստանում արդէն նոր իշխանութիւն կը լինէր», գրել է կայքը:

ՀԱԿ մամուլային խօսնակ Արման Մուսիսեանի անունից պարզաբանում տարածուեց վերոնշեալ հրատարակման առիթով, որում նշել էին, թէ այդ՝ «Տէր-Պետրոսեանը փորձում է շանտաժով հրապարակ բերել Գագրիկ Ծառուկեանին» վերնագրով յօդուածում բացառութեամբ մէկ-երկու երկրորդական մանրամասներ, տպագրուած տեղեկատուութիւնը ծայրից ծայր սուտ է եւ մերկապարանոց հերիւրանք:

Խնդիրը բոլորովին էլ այն չէ, թէ լրատուամիջոցի հրատարակած յօդուածը որքան է իրականութեանը մօտ՝ մասամբ, թէ՛ ամբողջութեամբ: Իրականութիւնն արդէն շատերի համար է պարզ: Տէր-Պետրոսեանը վաղուց է ապացուցել, որ ՀԱԿ-ը միայնակ ոչինչ է եւ եթէ չլինի Ծառուկեանը՝ նա որեւէ շանտ չունի հասարակութեան առջ դուրս գալու:

Ո՞ւմ համար գաղտնիք չէ, որ այժմ Ծառուկեանի տրամադրութիւնից է կախուած, թէ ինչ ուղղութեամբ է գնալու «համաժողովրդական շարժում» կոչուածը...

ԶԼՄ-ներում յօդուածներով չէ, որ պէտք է ապացուցուի, թէ Տէր-Պետրոսեանի «կախիւրդ» այսօր ում է հաւասարուել՝ Տիգրան Կարապետեանի, թէ՛ Արամ Յարութիւնեանին: Սա վաղուց արդէն ցաւալի փաստ է, եւ դրա պատճառները թող ՀԱԿ-ում իրենց մէջ փնտռեն:

Ինչ վերաբերում է, թէ՛ «իշխանութիւնը, երբ է փողոցում ընկած» եղել, ապա վաղուց ժամանակն է արձանագրել, որ իրեն ընդդիմութիւն համարող ՀԱԿ-ն է «փողոցում ընկած» եւ երբ տարուց աւելի սպասում է, որ Ծառուկեանը «վերցնի փողոցից» նրանց:

Բայց արդեօ՞ք ՀԱԿ-ը պէտք է Ծառուկեանին...

Ծառուկեանը, եթէ երբեք որոշի, վերջապէս, ազդեցիկ ու արմատական ընդդիմութիւն դառնալ գործող իշխանութիւնը, արդեօ՞ք Տէր-Պետրոսեանի կարիքն ունենալու է: Իհարկէ, Տէր-Պետրոսեանը պատրաստ է եւս երեք տարի քծնել Ծառուկեանին (առաջին նախագահը օլիգարխներ «կայցնելու» բացառիկ շնորհ ունի), բայց մի՞թէ դա է «համաժողովրդական շարժումը» եւ երկրում «աւազակապետութիւնը քանդելու» գրաւականը:

Յունուարի 20-ին, հաւանաբար, պարզ կը դառնայ Ծառուկեանը ինչ մարտավարութեամբ է հանդէս գալու առաջիկայում՝ սահմանափակուելու է համաժողովներ անցկացնելով, առանձին կուսակցութիւնների ղեկավարների հետ հանդիպումներով, թէ՛ Ազատութեան հրապարակ դուրս գալով:

Ինչ էլ որոշի Ծառուկեանը, վաղուց է պարզ, որ Տէր-Պետրոսեանը ոչ ընդդիմութեան, ոչ էլ ոչ իշխանութեան առաջնորդ չի եւ ոչինչ չի կարող որոշել, առաւելեւ՝ պարտադրել: Տէր-Պետրոսեանն այս վիճակին հասաւ իր «քաղաքագիտական վերլուծութեան» արդիւնքում:

«ՀԱՅԵԼԻ»

Հայ միգրանտները հետ դառնալու տեղ չունեն

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Ռուսաստանի Դաշնային Միգրացիոն Ծառայութեան ղեկավար Կոնստանտին Ռոմոդանովսկին յայտարարել է, որ 2015 թ. սկզբին միգրանտների հոսքը կրճատուել է 70 տոկոսով, անցեալ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ:

Սա շատ մեծ թիւ է եւ կապուած է ինչպէս միգրացիոն օրէնսդրութեան խստացման, այնպէս էլ Ռուսաստանի տնտեսական դժուարութիւնների՝ ռուբլու անկման, ներդրումների, շինարարական եւ այլ նախագծերի կրճատման հետ:

Հայաստանի քաղաքացիները, ովքեր երկար տարիներ աշխատանքի են մեկնում Ռուսաստան,

Հազարաւոր մարդիկ, ովքեր վաստակում էին այդ կերպ, դժուար թէ կարող են անգործ նստել Հայաստանում, եւ նրանք պէտք է պահանջներ ներկայացնեն նախեւառաջ կառավարութեանը: Արդեօք կառավարութիւնն ունի գործողութեան որեւէ ծրագիր այդ դէպքի համար, թէ՞ այդ հարցերի լուծումն էլ է վերապահուած Եւրասիական յանձնաժողովին:

Անցեալ տարուայ ընթացքում Հայ հասարակութեան մէջ տեղի է ունեցել անտեսանելի տրանսֆորմացիա: Ինչպէս վստահ առում էին հայկական իշխանութեան ներկայացուցիչները, Հայաստանում չի կարող յեղափոխութիւն լինել, քանի որ հայերը բողոքում են ճամպուրկներով ու ոտքերով:

Դէպի Ռուսաստան միգրացիայի խթանումը հայկական կառավարութեան առաջնահերթութիւններից մէկն է: Դա հնարաւորութիւն է տալիս, նախ, զբաղուածութեան պետական պարտաւորութիւնները զգել «խեղդուողների» վրայ, երկրորդ՝ երկրից դուրս մղել քաղաքացիական-յեղափոխական պոտենցիալը, եւ գլխաւորը՝ ստանալ տրանսֆերտներ, որոնց ծաւալը գրեթէ հաւասար է պետական պիւտճին:

առայժմ սպասում են: Լաւատեսները սպասում են Ռուսաստանի իրավիճակի բարելամանը, իսկ յոռետեսները մտածում են, թէ ինչից սկսեն Հայաստանում:

Առայժմ պաշտօնական տեղեկութիւններ չկան Հայաստանից մեկնողների ու ժամանողների թուի մասին, սակայն փաստը, որ Ռուսաստանից Հայաստան տոմս գնելն աւելի դժուար է, քան հակառակ ուղղութեամբ, վկայում է, որ Հայաստանի քաղաքացիները ժամանում են հայրենիք եւ առայժմ չեն պատրաստուում յետ գնալ:

Չնայած նրան, որ Յունուարի 2-ին Հայաստանը դարձել է Եւրասիական Միութեան անդամ, եւ ՀՀ քաղաքացիները կարող են ազատ մեկնել Ռուսաստան ու աշխատել, Ռուսաստանի տնտեսական իրավիճակը իմաստազրկում է աշխատուժի արտահանումն այդ երկիր:

Դէպի Ռուսաստան միգրացիայի խթանումը հայկական կառավարութեան առաջնահերթութիւններից մէկն է: Դա հնարաւորութիւն է տալիս, նախ, զբաղուածութեան պետական պարտաւորութիւնները զգել «խեղդուողների» վրայ, երկրորդ՝ երկրից դուրս մղել քաղաքացիական-յեղափոխական պոտենցիալը, եւ գլխաւորը՝ ստանալ տրանսֆերտներ, որոնց ծաւալը գրեթէ հաւասար է պետական պիւտճին:

Հայաստանն արտահանում է աշխատուժ եւ ներմուծում լաչն սպառման գրեթէ բոլոր ապրանքները: Եւ քանի դեռ այդ արտահանման ու ներմուծման «սալդոն» դրական է, Հայաստանը կարող է պահպանել քաղաքական-տնտեսական հաւասարակշռութիւնը: Հենց սալդոն մօտենայ զրոյի, հաւասարակշռութիւնը կը խախտուի:

Հիմա մօտենում է հենց այդ պահը, եւ հայկական կառավարութիւնը գուցէ մտածի, թէ ինչով է փոխհատուցելու տրանսֆերտների կրճատումը եւ այն մարդկանց վիճակը, ովքեր կը հասկանան, որ անիմաստ է մեկնել Ռուսաստան:

Սակայն, ներկայում իշխանութիւնը սկսել է քիչ խօսել այդ մասին, ելնելով Ռուսաստանի իրավիճակից: Թերեւս, իշխանութիւնը փորձում է հասկանալ, թէ ինչպէս իրենց կը պահեն գաստարբայտները՝ կը գնան կառավարութեան չէնքի մօտ, թէ կը գտնեն այլ ելք: «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻՍԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱԿ-ը Չի Մասնակցի Գագիկ Ծառուկեանի Հրահրած Խորհրդաժողովին

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանի հրահրած խորհրդաժողովին ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսը չէ մասնակցի:

Խորհրդաժողովը Ծառուկեանը նախաձեռնել է Յունուարի 20-ին՝ երկրում ստեղծուած բարդ իրավիճակը քննարկելու նպատակով: Հրահրուել են մօտ մէկ տասնեակ ոչ իշխանական կուսակցութիւններ, մի քանի տասնեակ հասարակական կազմակերպութիւններ, քաղաքագէտներ, վերլուծաբաններ եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ:



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեան

գութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը, ինչպէս յայտնի է, բազմիցս է յայտարարել արտահերթ լուծումների գնալու անհրաժեշտութեան մասին:

«Կարծում եմ իշխանափոխութեան պահանջը երեք ընդդիմադիր ուժերիս մօտ էլ կայ, դա բարձրաձայնուել է: Թէ այդ շրջանակում ինչ օրակարգի կը հանգենք, ինչ լուծումների կը հանգենք, ինչպիսի քայլերի՝ դա բնականաբար քննարկման խնդիր է: Այս խորհրդաժողովից յետոյ յոյս ունեմ տեղի կունենայ նաեւ երեք ընդդիմադիր ղեկավարների հանդիպում, եւ վերջնական կը որոշուի, թէ ինչ ճանապարհով եւ դէպքերու ենք գնում», - նշեց Արմէն Մարտիրոսեանը:

Ազգային ժողովում ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը «Ազատութեան» հետ զրոյցում համոզմունք յայտնեց, թէ ԲՀԿ-ն այսպիսով պատրաստուած է 2017-ի հերթական ընտրութիւններին. - «Նախապատրաստական փուլ է: 17 թուականը սարերի հետեւում է, մօտենում է արդէն: Բնականաբար իւրաքանչիւր քաղաքական ուժ իր ձեռով նախապատրաստուած է: Իրենք էլ այս ձեռով են նախապատրաստուած»

Գագիկ Ծառուկեանի նախաձեռնած խորհրդաժողովը կը գումարուի նորաբաց «Մուլտի Գրանդ» հիւրանոցային համալիրում: Ծքեղ համալիրի հանդիսաւոր բացմանը, յիշեցնենք, մասնակցեց նաեւ ԲՀԿ առաջնորդի խնամին՝ վարչապետ Յովիկ Աբրահամեանը:

«Հայաստանի Ներքաղաքական Կեանքում 2015թ.-ին Գզվոտոց Կը Լինի»

Հայաստանի ներքաղաքական կեանքում 2015թ.-ին կը լինի գզվոտոց: Յունուարի 12-ին, լրագրողների հետ զրոյցում նման կարծիք յայտնեց Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտի հիմնադիր, քաղաքական վերլուծաբան Ստյոպա Սաֆարեանը:

Քաղաքական վերլուծաբանը համոզուած է, որ Հայաստանում այս տարի իրական դիմադրութիւն չի սպասուում, քանի որ հենց ԵՏՄ-ին անդամակցելուն կողմ քուէարկեցին բոլոր քաղաքական ուժերը՝ բացառութեամբ «Ժառանգութիւն» կուսակցութեան:

«Միայն գզվոտոց է լինելու, այն էլ պայմանաւորուած է 2017թ.-ին ընտրութիւններով», - նշեց նա:

Ինչ վերաբերուած է արտաքին քաղաքականութեանը, ապա Ստյոպա Սաֆարեանը կարծում է, որ սպասուող փոփոխութիւնները

շատ անորոշ են:

«Եւրասիական Տնտեսական Միութիւնը ընդհանուր սահմանի բացակայութեան պարագաներում ոչինչ չունի դրական տալու Հայաստանի տնտեսութեանը: Այս միութիւնը չի ապահովում Հայաստանի անվտանգութեանը: Հետեւաբար, սպասուող փոփոխութիւններն այնքան մեծ անորոշութիւններ են պարունակում, որ քան նախորդ տարի էր: ԵՏՄ-ին անդամակցելով՝ նոյն անորոշութիւնն է տիրում մեր արտաքին քաղաքականութեան մէջ», - ասաց քաղաքական վերլուծաբանը:

Ստյոպա Սաֆարեանը նաեւ չի հաւատում, որ «Նախախորհրդարանը» Ապրիլի 24-ին իշխանափոխութիւն կանի:

«Նախախորհրդարանի» դէպքում ես թերահաւատ եմ: Այնուամենայնիւ, սպասենք, տեսնենք, թէ ինչ է նրանց յաջողումը», - ասաց քաղաքական վերլուծաբանը:

«2015-ին Հայաստանին Աւելի Ծանր Տնտեսական Գոյնաճամ Է Սպասուում»

Այս տարի Հայաստանին աւելի ծանր տնտեսական ճգնաժամ է սպասուում, քան զրանցուեց 2009-ին, համոզուած է Կենտրոնական Բանկի նախկին ղեկավար Բագրատ Ասատրեանը:

«Ազատութեան» հետ զրոյցում տնտեսագէտը յաւելեց՝ երկիրը մոտ է գործել ճգնաժամային տարի անպատրաստ, եւ անգամ 2015-ի պետական պիւտձէն չի արտացոլում արդէն այսօր առկայ իրողութիւնները:

«Այն ժամանակ խնդիրները շատ էին, բայց նաեւ դիւերսիֆիկացուած էին: Մի տեղից՝ արտաքին աշխարհից ստացուած հարուածը ծածկուում էր միւս տեղի առաւելութիւններով», - ընդգծեց Ասատրեանը:

«Այսօր Հայաստանը միանշանակ ինչ-որ ուղղութիւն է վերցրել, խօսքը Եւրասիական Տնտեսական Միութեան մասին է», - շարունակեց Ասատրեանը. - «Այսօր ակամայից Հայաստանը իր տնտեսական զարգացումները կապել է որոշակի տնտեսական միջավայրի հետ, որն ունի իր բնութագրերը՝ նաեւ սպասումների իմաստով: ԵՏՄ-ում որոշիչը Ռուսաստանն է, կարծես ունէ մէկը կասկած չունի, որ այդ երկրի տնտեսութեանը առաջիկայ 3 տարիների ընթացքում սպասում է անկում»:

Պաշտօնական տուեալներով 2009-ին Հայաստանի տնտեսութիւնը զրանցեց 14.1 տոկոս անկում, ինչն իր մեծութեամբ չորրորդն էր աշխարհում:

Բագրատ Ասատրեանը յաւելեց՝ «քաղաքական վճիռներ են կայացուել, որոնք սահմանափակում են մեր հնարաւորութիւնները Արեւմուտքից որոշակի ռեսուրսներ ներգրաւելու».- «[ԵՄ-ի] ծրագրերը կ'աշխատեն, միջպետական, ֆինանսական խոշոր հաստատութիւնները կը շարունակեն համարեա նոյն ծաւալով աշխատել»:

2014-ին Հայաստան Ժամանողները 3 Հազարով Աւելի Են Եղել Սեկնողներից

2014 թուականին «Զուարթնոց» եւ «Շիրակ» օդանաւակայանները սպասարկել են 2 մլն 082 հազար 755 ուղեւոր, ինչը շուրջ 324 511 ուղեւորով կամ 18,5 տոկոսով աւելի է 2013 թուականի ցուցանիշի նկատմամբ:

ՀՀԿԱ քաղաքցիական աւիացիայի գլխաւոր վարչութեան մամուլի ծառայութիւնից յայտնուած է, որ հաշուետու ժամանակաշրջանում մեկնողների թիւը կազմել է 1 039 891 ուղեւոր, իսկ ժամանել է 1 042 864: Մեկնողների եւ ժամանողների դրական հաշուէլշիւրը կազմում է մօտ 3000 մարդ:

Կառավարութիւնը 20 Միլիոն Դրամ Է Յատկացրել ՀՀԿ-ական Պատգամաւորի ՀԿ-ին

Կրթութեան նախարարութիւնից հաստատում են այս տարուայ պիւտձէով «Դարոց Կենտրոնների Միութիւն» հասարակական կազմակերպութիւնը կը ստանայ 20 միլիոն դրամ՝ մօտ 42 հազար դոլար դարձուցնելու ցանց ստեղծելու համար:

Այս յատկացումը հնչեղութիւն չէր ստանայ, եթէ կազմակերպութեան հիմնադիր նախագահ հանրապետական պատգամաւոր Ռուզանա Մուրադեանը չլինէր, իսկ կազմակերպութեան գործադիր տնօրէնը նրա դուստրը՝ Լիլիթ Անտոնեանը:

Կողուպցիոն ռիսկ, շահերի բախում այս հարցում Կրթութեան



Կենտրոնական Բանկի նախկին ղեկավար Բագրատ Ասատրեան

տել: Խնդիրն այն է, որ մասնաւորը չի գայ, այս զարգացումների պատճառով մասնաւոր հատուածը աւելի մեծ ռիսկեր է տեսնում եւ չի գայ Հայաստան»:

Բագրատ Ասատրեանը չի շեղեցրեց որ, 2009-ի տնտեսական ճգնաժամը հետեւանքները յաղթահարելու եւ դրամի կտրուկ արժեզրկումից յետոյ փոխարժէքը կայուն պահելու համար արտերկրից հսկայական միջոցներ ներգրաւուեցին:

«Արտաքին պարտքը մօտաւորապէս կրկնապատկուեց: Պետութիւնը լրացուցիչ մօտ 2 միլիարդ դոլարի համարժէք միջոցներ բերեց, ներարկեց տնտեսութեան մէջ: Հիմա 2015 թուականն է, ակնյայտ է, որ այդ աղբիւրը չի աշխատելու: Թէ արտաքին պարտքի մեծութիւնը, թէ երկրի ընդհանուր վիճակը... ակնյայտ է, որ մեզ էլ այդքան պարտք չեն տայ», - նկատեց տնտեսագէտը:

«Այսօր դեռ տեսանելի չեն այն աղիւրները, այն լուծումները, որոնք պէտք է հանգեցնեն շուկայի կարգաւորմանը: Վաղ, միւս օրը, թէ կը լինեն, եւ շատ ուրախ կը լինեմ», - ասաց Ասատրեանը, եզրափակելով. - «2015 թուականը Հայաստանը կը փակի աւելի շատ աղքատներով, քան անցած տարի»:

Զանուժ մեկնողների թիւը կազմել է 1 039 891 ուղեւոր, իսկ ժամանել է 1 042 864: Մեկնողների եւ ժամանողների դրական հաշուէլշիւրը կազմում է մօտ 3000 մարդ: Բեռնափոխադրումների ծաւալը կազմել է 10,4 տոննա, մի փոքր գիշերով 2013 թուականի ցուցանիշին, իսկ թուիչք/վայրէջքների քանակը աճել է 18,4 տոկոսով եւ կազմել 10 553:

նախարարութիւնը չի տեսնում, ասում է նախարարութեան հանրակրթութեան վարչութեան պետ Նարինէ Յովհաննիսեանը:

Պետական ֆինանսական կառավարման հարցերով փորձագէտ Արտակ Քիւրումեանը մէկն է, ով տարիներ առաջ հետազօտութեան արդիւնքում բացայայտեց, որ տասնեակ կազմակերպութիւններ դրամաշնորհ են ստացել նախագահականից, սակայն իրական գործունէութիւն չեն ծաւալում եւ նոյնիսկ չեն աշխատում գրանցուած հասցէում: Այս դէպքում էլ կասկածներ ունի, ասում է, որ պետական յատկացումներ կատարելու համար պէտք է լինեն յստակ չափանիշներ:



**ԼՈՒՐԵՐ**

**Չավուչօղլուն Կը Պնդի, Որ Փերինչեքը Մասնակցի ՄԻԵԴ-ի Դատին**

Թուրքիայի ԱԳ նախարար Մեւլութ Չավուչօղլուն յայտարարել է, թէ անհրաժեշտ է, որ Դոդու ֆերինչեքը մասնակցի Յունուարի 28-ին տեղի ունենալիք Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանի (ՄԻԵԴ) վճռաբեկ դատավարութեանը:

Թուրքական «Անատոլու» գործակալութեան հետ հարցազրոյցում Թուրքիայի ԱԳ նախարար Մեւլութ Չավուչօղլուն յիշեցրել է, թէ Շուեյցարիայում Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար դատապարտուած եւ դատարանի վճիռը ՄԻԵԴ տեղափոխած դատավարութեան կողմ հանդիսացող Դոդու ֆերինչեքը պէտք է մասնակցի Յունուարի 28-ին կայանալիք դատավարութեանը:

Չավուչօղլուն յիշեցրել է, որ

Թուրքական դատարանը ֆերինչեքին արգելել է բացակայել երկրից, սակայն կարող է Հայաստանի դէմ դատավարութեան համար բացառութիւն անի:

Նշենք, որ 2008 թուականին Շուեյցարիայի դատարաններէն մէկը Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար դատապարտել էր Թուրքիայի Աշխատաւորական կուսակցութեան առաջնորդ Դոդու ֆերինչեքին:

Փերինչեքը դիմել էր ՄԻԵԴ եւ նախորդ տարի Դեկտեմբերին ՄԻԵԴ-ը բաւարարել է ֆերինչեքի հայցն ընդդէմ Շուեյցարիայի:

Շուեյցարիան բողոքարկել է ՄԻԵԴ-ի որոշումը, որից յետոյ Հայաստանը դիմել է ՄԻԵԴ եւ հանդէս է գալիս որպէս 3-րդ կողմ:

**Թուրքական Դատարանը Հայ Զինուորի Սպանութեան Գործը Զրոյից Կը սկսի**

Թուրքիայում 2011 թուականի Ապրիլի 24-ին զինծառայակցի կողմից սպանուած Սեւակ Շահին Բալըքչըի սպանութեան գործով Թուրքական դատարանն անսպասելի որոշում է կայացրել:

Թուրքական «Տեմոքրատիկ հասարակ» կայքի փոխանցմամբ, Սեւակ Շահին Բալըքչըի ընտանիքը համաձայն չի եղել դատարանի կողմից ամբաստանեալի նկատմամբ կայացրած որոշմանը եւ բողոքարկել էր կայացրած դատավճիռը, ըստ որի, ամբաստանեալի անփութութեան հետեւանքով է սպանուել Սեւակը:

Զինուորական վճռաբեկ դատարանը բեկանել է կայացրուած վճիռը եւ գործն ուղարկել դատարանի վերանայման, որից յետոյ 4,5 տարի պայմանական ազատազրկման դատապարտուած Քվանչ Աղաօղլուի պաշտպանական ճառը դատարան հասնելուց յետոյ դատարանը որոշել է Սեւակ Շահին Բալըքչըի

չրի գործը վերանայել գրոյից:

Յիշեալ գործով հերթական դատավարութիւնը տեղի կունենան Փետրուարի 27-ին:

Յիշեցնենք, որ որ Սեւակի գործը մնացել էր 23 օր: 2011-ի Ապրիլի 24-ի առաւօտեան նա սպանուել է մէկ այլ զինծառայող՝ Քվանչ Աղաօղլուի կողմից: Սպանութեան հետ կապուած ժանդարմերիան յայտարարել է, որ այն տեղի է ունեցել ծառայակցի ընկերով հետ կատակ անելու ժամանակ, իբր, պատահաբար արձակուած կրակոցից: Սեւակի ծնողները պնդում են, որ իրենց որդուն սպանել են ազգայնակախութեան հողի վրայ՝ հայ լինելու համար:

Սեւակ Շահին Բալըքչըի սպանութեան գործով դատարանը 4,5 տարուայ ազատազրկման է դատապարտել Սեւակի զինծառայակցի Քվանչ Աղաօղլուին՝ անփութութեան հետեւանքով մարդ սպանելու համար:

**Ահաւոր Ոճիր Կիւմրիի Սեչ**

Շարունակուած էջ 1-էն

Թիւնը:

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան կոչ ուղղեց Աւետիսեաններու սպանող չքաղաքականացնել:

Անոր խօսքով, քրէական գործի ընթացքին ոճիրի բոլոր մանրամասնութիւնները պիտի բացայայտուին: Նախարարը նաեւ տեսակցեցաւ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարի տեղակալ Արկարի Բախինի հետ: Անոնք քննարկեցին զինուորի թղթածրարը եւ ռուս պատասխանատուն յայտարարեց ծառայողական քննութիւն իրականացնելու որոշումի մասին:

Նախնական հետաքննութեան արդիւնքով բնակարանին մէջ գտնուեցան 21 փամփուշտներու պարճուկներ, կասկածելի զինուորական տարազը, մէկ հրաձիգ, մէկ դանակ, երկու փամփուշտակալ՝ մէկը

դատարկ, միւսը՝ լեցուն: Հետաքննութիւնը ղեկավարող փոխ ոստիկանապետ Յունան Պողոսեանի համաձայն, կասկածեալը հաւանաբար փախուստ տուած է քաղաքացիական զգեստով եւ անզէն: Ընտանիքի բոլոր անդամներուն մարմինները գտնուած են անկողինի մէջ:

Ռուս Զինուորականին եւ Աւետիսեան ընտանիքին միջեւ կապի մասին որեւէ յստակ տեղեկութիւն չկայ:

Կասկածեալ զինուորը Դեկտեմբեր 3-ին տեղափոխուած էր Կիւմրի: Նախքան բանակին միանալը, զինուորը կը մնար իրաւապահ մարմիններու հսկողութեան տակ: Անոր եղբայրը դատապարտուած է մարդասպանութիւն կատարելու յանցանքով:

Զինուորին ընկերները սակայն կը պնդեն, որ անոր մօտ վայրագութիւն երբեք չեն նկատած:

**Իսպանական Հեղինակաւոր Թերթը Մեծ Յօդուած Է Հրատարակել Հայոց ցեղասպանութեան մասին**

Իսպանական հեղինակաւոր «El Imparcial» թերթում Ռիկարդո Ռուիս Դե Լա Սերնան ծաւալուն յօդուած է հրատարակել Հայոց ցեղասպանութեան մասին, որը վերնագրուած է «Քրիստոնեաների ժամանակը»:

Յօդուածում մասնաւորապէս, աւսուած է.

«2015 թուականին լրանում է Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը: 1915-1918 թուականներին ընթացքում Օսմանեան կայսրութեան մօտ 600,000 հայ, իսկ այլ տուեալներով մէկ միլիոն ութ հարիւր հազար, կոտորուեցին այնպիսի քաղաքականութեան արդիւնքում, որի նպատակն էր նրանց բնաջնջելը երկրի երեսից: Այդ քաղաքականութիւնը միայն նրանց համայնքները ոչնչացնելու էր նաեւ նրանց ներկայութեան մասին յիշողութեան եւ դա ապացուցող պատմութեան մասունքների ջնջում: Քրիստոնեայ հայերը, ինչպէս յուները եւ կալդեացիները, ենթարկուեցին ձերբակալութիւնների, զանգուածային սպանութիւնների, վտարումների եւ անապատներում յոգնատանջ դեգերումների, ինչի նպատակը նրանց կոտորելն էր: Նրանց վնասներով տանում էին այն վայրեր, որտեղ մահանալու էին: Թուրքական բանակի հայ զինուորները նախ զինաթափուեցին եւ յետոյ դատապարտուեցին մահուան: Կանանց, երեխաներին եւ ծերերին վերապահուեց նոյն ճակատագիրը, ինչ պատերազմի մասնակցելու տարիքի հասած տղամարդկանց: Կայսրութեան վեց հայկական նահանգների ոչնչացումը սկսուել էր, սակայն, նախքան 1915 թուականը: 1894-1896 թուականներին համիդեան ջարդերը սարսափ տարածեցին կայսրութեան քրիստոնեայ փոքրամասնութեան շրջանակում: 1909 թուականին կոտորածի թատերաբեմ դարձան Ատանան եւ Կիլիկիայի այլ քաղաքներն ու զիւղերը: Երբ 250 հայ մտաւորական ձերբակալուեց Կոստանդնուպոլսում 1915 թուականի Ապրիլի 23-24-ը, համայնքի բնաջնջման ուղին արդէն գծուած էր:

Միջին Արեւելքի պատմութիւնը պայմանաւորուած է կրօնական փոքրամասնութիւնների եւ մեծամասնութիւնների համակցութեամբ (քրիստոնեաներ եւ մահմդեականներ, շիաներ, սունիներ, զրադաշտներ, եզդիներ եւ այլք) եւ ժողովրդավարական հասարակութիւններ կառուցելու մարտահրաւերով, որտեղ քաղաքացիութիւնը առաւել զօրեղ է քան կրօնը կամ ցեղայնութիւնը: Եթէ քրիստոնեաներն անվտանգ չեն կարող ապրել իրենց իսկ պետութիւններում, ուր համայնքներն ապրում էին դեռ Մուհամմէտ մարգարէի ծնունդից դարեր առաջ, ամբողջ տարածաշրջանը կը սուսի եւ կը շարունակուի վէճը աշխարհիկների եւ կրօնականների, բանականութեան եւ հաւատի, ժողովրդավարութեան եւ կրօնապետութեան միջեւ, իր հետեւից թողնելով դիակներ:

Աշխարհը չի կարող կրկին անգամ քրիստոնեաների ոչնչացման անտարբեր վկայ լինել: Ոչ մէկը չզնայ պատերազմի հայերին

պաշտպանելու համար: Միացեալ Նահանգներում ձեւաւորուած շարժումը ծառայեց, որպէսզի ստեղծուի կրիտիկական մի գանգուած, որը կազմակերպեց մարդասիրական օգնութեան ուղարկումը, սակայն չկանխարգելեց բնաջնջմանը: Չեմ թերագնահատում դրանց կարեւորութիւնը:

Գիտենք այն ինչ տեղի է ունեցել միսիոններին եւ դիւանագետների վկայութեան շնորհիւ: Կը սահմանափակուեմ ընդգծելով, որ մի համայնքի երկարաժամկէտ փրկութիւնը հնարաւոր չէ միայն մարդասիրական օգնութեամբ եւ որ միայն դա բաւարար չէ: Զգուշաւոր լինելով իրենց տարածքի իսլամական բնակչութիւնից, ո՛չ Բրիտանական, ո՛չ Ֆրանսիական կայսրութիւնը քայլեր չձեռնարկեցին հայերին փրկելու ուղղութեամբ: Այժմ, դա արեց ռուսը, սակայն անհաւասարաչափ արդիւնքներով, որի բանակում կուռում էին Յարի կայսրութիւնում ապրող հայերը: Վերջիվերջոյ, Հայաստանի Հանրապետութիւնը, նախ միայնակ, ապա ինտեգրուած ԽՍՀՄ-ում, փրկեց հայերին:

Անցեալ տարուայ Յունիսին, մինչ իսլամական Պետութիւնը յաղթանակում եւ տարածում էր իրաքի վրայ, Հոռոմի Պապ Ֆրանցիսկոսը կտրուկ բառերով յիշեցնում էր. «Այսօր անհամար նահատակներ կան եկեղեցում, բազմաթիւ քրիստոնեաներ են հետապնդուում: Մտածենք Միջին Արեւելքի մասին, այն քրիստոնեաների, որոնք փախչում են հետապնդումներից, այն քրիստոնեաների, որոնք սպանուած են իրենց հետապնդողների կողմից»: Հայր Գաբրիէլ Նադաֆը հրաւիրեց արաբախօս քրիստոնեայ երիտասարդներին միանալու Իսրայէլի Պաշտպանութեան Ուժերին, որպէս ձեւ՝ ինտեգրուելու այն հասարակութեան մէջ, որտեղ ապրում են եւ միանալու «ազատութեան, ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքներ բոլորի համար» նախագծին: Այդպէս է շարունակուած տրուզները եւ բեղվիւնների մոդելը:

Միւրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, իհարկեւ նաեւ Իրաքում, քրիստոնեայ համայնքները մտահոգութեամբ են դիտարկում իսլամիզմի, շիհադիզմի եւ դրանց ուղեկցող ահաբեկչութեան աճն ու տարածումը: Այդ բարբարոսները, որոնք սպանուած են յանուն իսլամի նենգ տեսլականի եւ սպանուած են յանուն Աստուծոյ, ում անունը հայհոյում են ամէն բառով եւ ամէն գործողութեամբ, թշնամիներն են արժանապատուութիւնն, ազատութեան, բանականութեան եւ այն ամէնի, ինչ իրենից ներկայացնում է հրեաքրիստոնեական քաղաքակրթութեան ժառանգութիւնը:

Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը, որը նշուած է Ապրիլի 24-ին, մեզ վրայ պարտականութիւն է դնում յիշելու եւ պատասխանատուն դառնալու առ այն, որ այն երբեք չկրկնուի որեւէ ժողովրդի, որեւէ համայնքի կամ որեւէ կրօնական խմբի հետ:

Այդ պատճառով, 2015 թուականի մեր թերթի այս առաջին յօդուածը, պահանջում է արդարութիւն եւ օգնութիւն Միջին Արեւելքի քրիստոնեաների համար:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net



### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԸ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԷՋ

#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Հայկական Յեղասպանութեան ուրացումի քաղաքականութիւն մշակող եւ տարածող թուրք պետականութիւնը իր 2014-2015 ուսումնական տարեշրջանի պատմութեան գիրքերուն մէջ հայը կը ներկայացնէ որպէս «օտարներու կողմէ հրահրուող, որուն նպատակն է կտրատել պետութիւնն ու երկիրը, որ նաեւ սպաննած է թուրքեր ու իսլամներ»:

Թուրք պատմագէտ ու հայասէր Թանէր Աքչամ, որ կը վարէ սնօրէնի պաշտօնը Ամերիկայի Ուստր (Worcester, Massachusetts) քաղաքին մէջ գտնուող Clark University-ի Armenian Genocide Studies բաժնին, վերջերս կատարած է ուսումնասիրութիւն մը եւ հրատարակած յօդուած մը, որուն մէջ ան կը գտնուի այնպէս աշխարհը՝ որ երբեք չիսարուի թրքական կառավարութեան հայերու հանդէպ բարեացակամ երեւնալու իրաբանիկ երեւոյթներէն, եւ կ'ըսէ թէ ինչպէս թուրքիա կ'ըզէ ցոյց տալ աշխարհին, թէ ինք է որ հաշտութիւն կ'ըզէ ընել եւ հայերն են որ միշտ հեռու կը մնան, տալով այն սպաւորութիւնը, թէ ինք է այն կողմը որ պատրաստ է զիջում կատարելու եւ լուծում գտնելու՝ երկու ժողովուրդներու թշնամութեան վերջ դնելու համար:

Ըստ Աքչամի, դպրոցական այդ դասագիրքերուն մէջ դրուած հայատեաց գրութիւնները բաւ են որ ցոյց տրուին աշխարհին, որ պէտք է զիջում տրուի թուրք պետական իսկական դէմքն ու թշնամական վարքագիծը:

Զարհուրելի (shocking) եւ ցաւալի (saddening) կը նկատէ Թանէր Աքչամ, կարգալէ ետք այդ դասագիրքերուն մէջ երեւցող ստաբանութիւնները: Մարդկութեան առողջ մտքի կշիռին վրայ նոյնիսկ փոշի չդնող թուրք պետական պաշտօնեաներու թեթեւամիտ բաց ամբարտաւան այդ ստաբանութիւնները գանատական ըմբռնումով կարելի է նկատել ցեղապաշտական (racist) եւ խղճալ ինքզինքնին պատմագէտ նկատող այդ թուրք պատմագիրներուն:

Եկէք միասին հետեւինք թուրքի գրիչով գրուած այդ ըստաբանութիւններուն: Ութերորդ դասարանի պատմութեան դասագիրքին մէջ, որ նաեւ պետական պարտադիր դասագիրք է պոլսահայ դպրոցներու մէջ (ինչ դժբախտութիւն), աշակերտը կը սորվի թէ թուրքիոյ դէմ մեծագոյն սպառնալիքներէն մէկը Հայկական Հարցն է, եւ հոս Աքչամ ճիշդ կը հետեւցնէ, թէ Հրանդ Տինքը սպաննողին նմանները թրքական դպրոցներու մէջ կը սորվին ատել հայը: Իսկ միջնակարգ դասարաններու դասագիրքին մէջ Ատանայի ջարդը կը կոչուի «Ատանայի հայերուն ըմբոստութիւնը» եւ Հայկական Յեղասպանութիւնը կը կոչուի «1915-ի հայկական դէպքեր», ուր կ'ըսուի թէ Հնչակ-Դաշնակ կազմակերպութիւնները ըմբոստութիւն չառաջացուցին Անատոլիոյ մէջ, թէ այդ հայկական կազմակերպութիւնները



րը վտանգի ենթարկեցին կեանքը բոլոր այն հայերուն որոնք չէին ուզեր միանալ իրենց, թէ հայոց բռնի տեղահանութիւնը կատարուեցաւ, որպէսզի իսլամադասէր հայը գիւղերու եւ քաղաքներու մէջ փրկուէր հայ ֆետայիներէն - որոնք կը վտանգէին անոր կեանքը: Այս մէկը կատակ չէ, կ'ըսէ Թանէր Աքչամ, եւ դասագիրքին մէջ բերում կը կատարէ, ուր կ'ըսուի. «Քանի որ հայերը, որոնք ջարդեր կը կատարէին Ռուսիոյ մեղսակցութեամբ, ստեղծեցին վտանգաւոր վիճակ մը, տեղահանութեան օրէնքը պահանջեց որ հայերը իրենց ապրած քաղաքներէն եւ գիւղերէն տեղափոխուին Սուրիա, որ կը նկատուէր ապահով օսմանեան հող»: Ուրեմն, ըստ թուրք ներկայ պատմագրողին, օսմանեան կառավարութիւնը ոչ միայն փորձեց պաշտպանել հայ ժողովուրդը նոյնինքն հայ «ասաբեկիչներէն», այլ տեղահանութեան ընթացքին կատարեց ամէն ինչ որ կ'իրագործէ անոր ապահովութիւնը...:

Պէտք չկայ կարծեմ շարունակելու: Բաւական է հոս յիշել իմաստուն խօսքերը անոնց որոնք կ'ըսեն՝ «ես բամբասողին չեմ ատում այնքան որքան նրա հաւատացողին», եւ «զիս բամբասողը եթէ պակաս է, ապա այդ փաստն է որ ես կատարեալ եմ»:

Վերջին քանի մը օրերու ընթացքին եւ Ամանորի ու Ս. Ծնունդի տօնական օրերուն առթիւ, դիտեցի Հայաստանի հեռատեսիլի «Արմենիա» եւ «Կենտրոն» կայաններուն վրայ հայրենի մեր ժողովուրդին երգի ու պարի ելոյթները եւ արուեստի բարձր մակարդակով տեղի ունեցող ճանդէները. տեսայ թէ ինչպէս ամէնքը իրենց երգերով փառաբանեցին մեր ազգային բանակը՝ պարերով եւ իսլամադասէր տենչացող մաղթանքներով: Ու մտաբերեցի թէ որքան լաւ է մեր ներկան բաղդատած մեր անցեալին, այն անցեալին՝ որուն արիւնոտ գիւղերէն ու քաղաքներէն տեղահան եղած մեր սփիւռքահայ ժողովուրդը, հակառակ ներկայ թուրք պատմաբաններու սուտերուն, փառք կու տայ իր Հնչակ ու Դաշնակ ֆետայիներուն, որոնք կտրեցին հայու պորտը թուրքի լուծէն եւ հիմը դրին մեր այսօրու ազատագրեալ հայրենիքին ու օրինակ ծառայեցին արցախեան յաղթանակներ կերտող մեր պանծալի բանակին:

### ՏԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱԼԱՆԱԻՐՈՒԵԼ Է ՏՐԱՊԻԶՈՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ 2 ԱՇԽԱՏԱԿԻՑ



Պոլսահայ ականաւոր հասարակական գործիչ, լրագրող, «Ակոս» թերթի հիմնադիր-խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործով վերսկսուած դատավարութեան ընթացքն ուղեկցուած է ցնցող զարգացումներով:

Նման բնորոշում է տուել թուրքական «Հրզլը հաբեր» լրատու կայքը: Աղբիւրի համաձայն՝ Տրապիզոնի ոստիկանութեան հետախուզութեան վարչութեան աշխատակից երկու ոստիկանի՝ Մուհիթիին Զենիթի եւ Օզքան Մուսլուի նկատմամբ կալանքը որպէս իսպանման միջոց կիրառելու որոշում է ընդունուել:

Նշուած է, որ այդ անձինք 2014-ի Դեկտեմբերի 26-ին ցուցմունքներ էին տուել հարցաքննութեան վարոյթի իրականացող դատախազ Գէօքալի Քէօքչուին: Հարցաքննութեանը հետեւել էր ոստիկաններին կալանաւորելու մասին դատախազի որոշումը, բայց դատարանը նրանց ազատ էր

արձակել: Դատախազ Քէօքչուին Ստամպուլի N 6 քրէական դատարանում բողոքարկել էր ոստիկանների ազատ արձակման վճիռը: Արդիւնքում որոշում է կայացուել կալանաւորել կալածեալի կարգավիճակում յայտնուած ոստիկաններին:

Նրանք մեղադրուած են «պաշտօնի չարաշահման» եւ «չանցաւոր անփութութեան հետեւանքով սպանութեան պատճառ լինելու» մէջ: Յայտնի է դարձել, որ Տինքի սպանութիւնից առաջ նրանք հեռախօսագրոցներ են ունեցել, բայց այդ մասին ոչինչ չեն տեղեկացրել Ստամպուլի ոստիկանութեան հետախուզութեան վարչութեանը:

Յիշեցնենք, որ Հրանդ Տինքը սպանուել է «Ակոս»-ի խմբագրատան դիմաց, 2007 թուականի Յունուարի 19-ին: Սպանութեան անմիջական կատարող Օզիւն Սամասթը դատա պարտուել է 25 տարուայ ազատագրկման:



### ԱՐԴԻ ԼՐԱՏՈՒԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿՐ ՅԱՅՏՆԵՆ

#### ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՆԱՆ

Արդի լրատուական միջոցներն ու մամուլը կը յայտնեն թէ վերջերս երբ մուտքի վիզայի համար Հայաստանի քաղաքացիները դիմումներ կը կատարեն Միացեալ Նահանգներու երեւանեան հիւպատոսութեան, կը ստանան տասը տարիներու մուտքի վիզա:

Այս արտօնութեան չաճապարենք ծափ տալ, գուցէ ապտակի արժանի ըլլայ: Բայց ինչո՞ւ պիտի ըսէք: Անշուշտ ձեր ինչու ըսելը ունի իր իմաստը:

Հայ մարդ ես, կը նստիս, կը մտածես.- վիզաները- այլ եւ այլ երկիրներու համար, օտար երկրի մը քաղաքացիին համար, մուտքի եւ կեցութեան յատկացում կ'ըլլան վեց ամիս կամ առաւելագոյնը մէկ տարուան համար: Ուրիշ ո՛ւր, Հայաստանի քաղաքացիին կը «չտրուի» տասը տարուան մուտքի ու կեցութեան վիզա դէպի Միացեալ Նահանգներ: Այս ինչ վեհագի առատաձեռնութիւն: Վայրկեան մը մտածելէ ետք կ'ըսէք.- Մուտ հաշիւ մը կայ այս ժխտի տակ: Կ'երեւի, որ քան կարելի է, այս կերպ վարողները կը ջանան պարզել Հայաստանը իր հայ բնակչութեան առանց գիտնալու կամ չգիտնալ ձեւացնելով, որ Հայաստանը ոչ ոք կարող է պարզել վիզաներով, վկայ կ'ուզէք.- ահա օսմանցին, կամ օսմանցիութեան ձագերը այդ փորձը կատարեցին հարիւր տարի առաջ, հայ հողին վրայ մէկ ու կէս միլիոն հայ ջարդելով եւ հարիւր հազարներ խլամացնելով:

Արդիւնք, հայը մնաց, շարունակեց ապրիլ իր հողին մէկ մասին վրայ եւ երեք անգամ ունեցաւ հանրապետութիւն: Այս վերջինը ահա արդէն շուրջ քառորդ դարէ ի վեր կ'ապրի, կը գործէ որպէս ազատ, անկախ հանրապետութիւն:

Հոլանտացի բանաստեղծ մը գրած է.- հայը կը նմանի նուռի ծառի: Թ՛շնամին եթէ պոկոտէ, ջարդէ նուռի ծառը, պոկոտէ նուռերը կը փորձէ ուտել բոլոր նուռերը, այդ նուռերէն անպայման հատիկները կը թափեն իրենց շուրջ բոլոր ու այդ հատիկները կը վերածուին նուռի ծառերու:

Հայը անվերջ է նուռի ծառին պէս: Ահա թէ ինչո՞ւ հայը փչող ամենասաստիկ քամիներու դէմ անգամ կը դառնայ կաղնիի ծառ խորը խրոտած արմատներով եւ չի սասանիր: Ամենասաստիկ քամիներն անգամ կաղնիին տերեւները լոկ կրնան խառնչուիլ, որոնց միջոցաւ ալ հայ կաղնիին իր ապրելու, գոյատեւելու երգն է որ կը հնչեցնէ:

Հայ կաղնիին փերթել անհնար է:

Այս քանը եթէ այսօրուան Արեւմուտքը չհասկցաւ, օմանցին եթէ չհասկցաւ ու կը շարունակէ յուսալ, որ կրնայ օմանեան հզօր պետութիւն մը կազմել Պոլիսէն մինչեւ Կամչատքա, թող շարունակէ յուսալ այդ անկարելին կոխտելու փորձեր ընելով հայոց երկրին վրայէն: Կ'երեւի Միացեալ Նահանգներու հիւպատոսարանները եւս չեն հասկցած թէ հայը կոչուած է ապրիլ յաւիտեան ու Հայաստանը պարպել հայութեան, գուր աշխատանք է, որ քան ալ այդ աշխատանքը դառնայ սիրոնական թէ բանթուրանական:

Բոլորն ալ դաշնակցած իրարու, ինչպէս այսօր քանդել կը փորձեն Արաբական աշխարհը ի գուր տեղը, որ քան ալ փորձեն պարպել հայոց շատ փոքրիկ բայց աթոմի պէս ուժեղ Հայաստանը, երկուքին մէջ ալ պիտի ձախողին: Երբ հայը կրցաւ շրջանցել Ապրիլի 24-ը եւ ըսաւ իր մեծ ԱՅՈՒՆ ըսել ուզեց.- ՊԻՏԻ ԱՊՐԻՆՔ հակառակ Ապրիլ 24-ին: Ահա թէ որպիսի խոհերով տարուեցանք այս առաւօտ Հայոց Հոլոքոսթի հարիւրամեակէն մէկ քանի ամիս առաջ: Հայոց իմաստութեան գէնը դարերը շարժած պիտի շարունակէ իր անվերջ երթը՝ դէպի նորագոյն դարեր:

Հայաստանը թիմուր Լէնկի, Օսմանեան, Հոլովմէական, Բիւզանդական կամ Խորհրդային իշխանութիւն չէ՛, որ տապալի: Աշխարհի բոլոր միապետական իշխանութիւնները ենթակա են տապալումի: Կայ ու կը մնայ Հայաստանը, այս անգամ ոչ թէ բաժան բաժան, այլ միաւորուած որպէս մէկ ամբողջութիւն:

Դարերու դասը որպէս վկայ՝ բոլոր չկամեցողներու դէմ: Թէեւ փորձերը կը շարունակուին արաբական հողերու վրայ, դարձեալ ի գուր տեղ: Նոր վկայութիւն ու նոր փորձ.- 1600 հոգիներ գինեալներու վորմակի մը հերոսաբերութեամբ Քեսապի վրայ երկու օր առաջ:

Պետական ուժեր, յետ մղած են յարձակողները որոնք ան - վերջ չեն կրնար ըլլալ: Ճնշումի դէմ հակաճնշում, այդ, ժողովուրդին պողպատուած կամքն է, գոր փշրել անհնար է:

Ձեր պարանոցին դէմ պիտի գտնէք ժողովուրդին սուրը: Հոս, այսօր եւ ընդմիջտ վիզա կնքողը ժողովուրդը պիտի ըլլայ եւ ոչ թէ պետութեան մը պաշտօնեան: Եւ արդէն ինչ ըսել է պետութիւն, որ թարգմանի պարզապէս՝ ճնշող մեքենայ, որուն դէմ ահա՛, որպէս հակաճնշում կամքը ժողովուրդ գանգուածին:

### 100 ԱՄԵԱԿ. ԿԱՐԵՒՐԸ ՍՈՒԳՐ ՄԵՐ ՄԱՐՄՆԵՆ ԴՈՒՐՍ ԶԱՆԵՔ

#### ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

2015 Տարին (որ կը համընկնի Հայոց ցեղասպանութեան յիշատակումի 100-րդ տարելիցին) մեծ ակնկալիքներով պիտի չմտնել: Ճիշդ է, որ շատ իւրաքանչիւր տարի մը կոչուելու պատեհ առիթը պիտի ունենար այս տարին, բայց մինչեւ այս պահը բոլոր տուեալները հակառակը ցոյց կու տան:

Մենք այնքան մեծցուցինք այս տարուան իմաստը, որ հիմա յառաջիկայ 25 Ապրիլին մեծ հիասթափութիւններու գիրկը պիտի նետուինք:

Մեզմէ շատեր լաւ գիտեն, որ այս տարին եւս ոչինչով պիտի տարբերի մինչեւ հիմա ցեղասպանութեան յիշատակը ոգեկոչող բոլոր ամեակներէն:

Տխուր փաստը այն է, որ 1930-ականներէն սկսեալ սփիւռքի մէջ աճած սգատօնին մթնոլորտը այսօր փոխադրուած է Հայաստան:

Հասկնալի է, որ սփիւռքի թիթեղեայ «քէմբերուն» մէջ այդ սգատօնը որոշ սրբութեամբ մը կ'իրականացուէր: Եւ լուրջ հարց է, որ այսօրուան յիշատակի հանդիսութիւնները ինչքանով են անկեղծ:

Կը խօսինք ցաւի մը մասին, որ այսօր անցեալի ուժգնութիւնը չունի: Մեր մարմնին վրայ այլ վէրքեր կան: Անոնք կը կոչուին՝ Արցախ, Պէյրութ, Հայէպ: Մենք նոյնիսկ մոռցած ենք օրինակ, թէ Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն քանի գոհ տուինք: Քանի հայ գոհուեցաւ, քանի հայ անտուն մնաց ու քանի հայ գաղթական դարձաւ:

Այսպէս ցեղասպանութիւնը վերածեցինք շոռի եւ ոտքի ելանք աշխարհին համոզելու, որ՝ «տեսէ՛ք մեզի մորթեցին ու մենք հիմա այդ օրը դարձուցինք մեր ցաւերը ձեզի ցուցադրելու օրուան»: Բեմականացուցինք ամէն ինչ:

Մտահոգիչ է, որ կրնանք նոյնիսկ մեր բառերը վերածել սուտով շրջանակուած քարտերու եւ լալ չկարենալու տագնապէս մեղադրել մենք զմեզ, որ այս տարին եւս մենք պարապի տուինք:

Մեր խնդիրը նախ եւ առաջ մենք ենք: Ինչ որ այսօր տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ այդ խնդրին իրական ցուցանիշներէն մէկն է:

Նահատակներու սուրբ սեղանը հանուած է աճուրդի: Գիտնական, ակադեմիկոս եւ պատմագետ մեծ բառերու շղարշին տակ

պահուելով հին հաշիւներ կը մաքրեն: Մամուլին մէջ երեւոյթը կը դատապարտուի, բայց չկայ մէկը, որ ըսէ. «Վերջ տուէք այս աճուրդին»:

Չկայ մէկը, որ կանգնեցնէ այս ձեռքերու լուացումը սուրբ սեղանին առջեւ:

Եւ քը ցեղասպանութեան առթիւ կազմակերպուելիք սոսնահանդէսները չեն:

Եւ քը Փարիզէն, Նիւ Եորքէն, Հոլանտայէն, Պէյրութէն եւ Ա - Թէն քէն Երեւան հասնող եւ Ծիծեռնակաբերդ բարձրացող «վշտահար» մարդոց արցունքը չէ:

Եւ քը աշխարհի մամուլի առաջին էջերուն վրայ երեւելիք յօդուածներուն հրապարակումը չէ: Եւ քը՝ Ծիծեռնակաբերդի յուշակոթողին շուրջ բերուած մեխակներուն ու վարդերուն չորս թոն ըլլալը չէ: Եւ քը նահատակ գրագետներուն նկարերով պատառնները օդին մէջ ծածանելը չէ:

Այս բոլորը կան, այս բոլորը պիտի ըլլան: Ու բնական է որ ըլլան: Մարդիկ ատենաբանութիւններ, հատորներ, գիրքեր եւ ալ - պոմներ պիտի տպեն:

Հաղորդումներ պիտի պատրաստեն, պիտի բացագանչեն: Տեղի պիտի ունենան երթեր, հաւաքներ, մատուցուին պատարագներ: Այս բոլորը հոսանքին մէջ են ու բնական ընթացքով պիտի կատարուին:

Չղայանալու կարիք չկայ: Բայց կարեւորը Ապրիլի 25-ն է: Ու կարեւոր է նաեւ, որ ինչ հուն պիտի ստանայ ցեղասպանութեան հարցը: Մեծ Եղեռնի իմաստին խորացումը եւ անոր բեռն ձեռքագատուելը այսօրուան Հայաստանին համար կարեւորագոյն խնդիր է: Անկէ դուրս նպատակ չի կրնար ըլլալ:

Հրեան իր երկիրը ստեղծեց, կերտեց, ամրացուց, հզօրացուց ու այդ պատուանդանին վրայ պարտադրեց աշխարհին՝ հոլոքոսթի ընդունումը:


Մենք հիմա ճիշդ հակառակը կ'ընենք:

Մեր մեծ տոկոսը, Պոսթընի, Նիւ Եորքի եւ Մոնթրէալի մէջ ըլլալով հանդերձ նստած է համակարգիչին դիմաց եւ «իմաստուն» ստատուաներ գրելով կ'ուզէ հաւատալ ու հաւատացնել, որ ցեղասպանութեան խնդիրը թոյն թափելով պիտի լուծուի: Անընդհատ նոյն նկարները կը տեղադրուին եւ

Մար.ք էջ 18

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909




**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning


- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը ԱՕհրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



# ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԸ ՎԱՐՂԵՐՈՒ ՇՔԵՐԹԻՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՅԹԸ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ

**ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆՅԱՆ**  
«Քալիֆորնիա Քուրիեր» թերթի  
հրատարակիչ եւ խմբագիր

Աւելի քան մէկ տարի առաջ խումբ մը հայ երիտասարդներ ստեղծեցին Ամերիկայի ծաղկասայլի հայկական ընկերակցութիւնը եւ ձեռնամուխ եղան յաւակնոտ ծրագիրի մը, որուն մասին շատ հայեր շատոնց մտածած էին, սակայն ոչ ոք փորձած էր իրականացնել: Անոնք որոշած էին 126 տարուան ընթացքին առաջին անգամ հայկական ծաղկասայլով մասնակցել աշխարհահռչակ Վարդերու շքերթին, որ կ'իրականացուի Քալիֆորնիոյ Փասատինա քաղաքին մէջ:

Իւրաքանչիւր տարուան առաջին օրը աւելի քան 100 երկիրներու մէջ շուրջ մէկ միլիառ մարդ հեռատեսիլով կը դիտէ այս սպաւորիչ շքերթը: Բացի այդ, մօտ 700 հազարանոց ամբոխը կը շարուի 9 քիլոմետրանոց շքերթի երթուղիի ողջ երկայնքով՝ յաղթահարելով ցուցանիշ համարուող ցած ջերմաստիճանը, ինչպէս ըսաւ իմ ընտանիքը այս տարուան Յունուար 1-ին: Ոմանք նոյնիսկ ամբողջ գիշերը կ'անցնեն մայթերուն՝ առաջին շարքերուն տեղ գրաւելու համար...

Շքերթի մեկնարկէն շատ չանցած հանդիսատեսները Փասատինայի եւ ամբողջ աշխարհի մէջ լսեցին տուտուկի անգուգական

հնչեղ ձայնը եւ ականատես եղան բազմահազար գեղեցիկ ծաղիկներով զարդարուած հայկական ծաղկասայլին՝ ազգային տարազներով տանեակ նրբագեղ պարողներու ուղեկցութեամբ: Այս տարուան Վարդերու շքերթի ընդհանուր թեման էր՝ «Ոգեշնչող պատմութիւններ», եւ հայկական ծաղկասայլը ի հարկէ ոգեւորիչ էր իր՝ «Քաղաքակրթութեան օրրան» պատշաճ խորագիրով: Շքերթի պաշտօնաթերթը հրապարակած է հետեւեալ փայլուն մեկնաբանութիւնը ծաղկասայլի լուսանկարուն հետ միասին.

«Բարի գալուստ «քաղաքակրթութեան օրրան». հայկական համայնքը իր ներկայացուցած ծաղկասայլով կը կիսէ դարաւոր հարուստ մշակութային ժառանգութիւնը Միացեալ Նահանգներու եւ ամբողջ աշխարհի հետ: Ամերիկահայերու վարդերու շքահանդէսի ծաղկասայլը կը ներկայացնէ հայերուն ունեցած ներդրումը այս մեծ երկրին եւ ամբողջ աշխարհի մէջ: Այս ծաղկասայլի իւրաքանչիւր առարկայ՝ սկսեալ գորգէն, կենաց ծառէն, թուռներէն եւ միրգերէն, մինչեւ յաւերժութեան նշանն ու դուրդուրը, կը խորհրդանշէ հայոց մշակոյթի առանձին բնագաւառ մը, ներառեալ՝ կրօնը, կրթութիւնը, արդիւնաբերութիւնը, երաժշտութիւնը, պարը եւ այլն: Գերակշռող գոյնը իւրաքանչիւր դան կարմիրն է, որ կը ստացուի



միայն Հայաստանի լեռներուն մէջ յայտնաբերուած միջատէ մը»: Մասնաւորապէս, ծաղկասայլը կը ցուցադրէր արագիւններ, սիրամարգեր, նուռեր, ծիրաններ, խաղող, հայոց այբուբենը, հայ կնոջ կերպարը աւանդական գլխազարդով եւ զգեստով՝ խորհրդանշելով «Մայր Հայաստանը» եւ եկեղեցուց կամարի հատուած մը՝ ներկայացնելով հայկական ճարտարապետութիւնը: Ծաղկասայլը արժանացած է «Նախագահի բաժակ» հեղինակաւոր մրցանակին:

Ծաղկասայլով, որ ունէր մօտ 17 մ երկարութիւն, 8.5 մ բարձրութիւն եւ 5.5 մ լայնութիւն, անցան քանի մը յայտնի մարդիկ, ինչպէս՝ Սամուէլ Տէր-Եղիայեանը (առաջին հայ ներգաղթեալ ԱՄՆ դաշնային դատաւոր), Գաբրիէլ Ինճեճիկեանը (Միացեալ Նահանգներու մէջ առաջին հայկական ցերեկային դպրոցի հիմնադիր),

Ֆլորա Տունայեանցը (յայտնի բարերար Փասատինայէն), նշանաւոր փաստաբան Մարք Կիրակոսը, հեռատեսիլի հաղորդավար ձիւ Սիմոնեանը, Փասատինայի նախկին ոստիկանապետ Պեռնար Մելեքեանը եւ դերասանուհի Անժէլա Սարաֆեանը: Զարմանալիօրէն ուղիղ 100 տարի առաջ հայ գործարար Մովսէս Փաշկեան եղած է 1915 թուականի Վարդերու շքերթի Մեծ մարշալը...

Թէեւ ծաղկասայլի կառուցման վրայ ծախսուած է 300 հազար տոլար, սակայն այդ ծախսը լիովին արդարացուած էր, քանի որ պատմութեան մէջ առաջին անգամ հայ մշակոյթը ներկայացուեցաւ աւելի քան մէկ միլիառ մարդու ամբողջ աշխարհի տարածքին՝ մէկ անձի հաշուով մէկ սենթէն պակաս ծախսով... Շքերթէն ընդամէնը քանի մը

Շար.ը էջ 18

AGBU VATCHE & TAMAR MANOUKIAN HIGH SCHOOL  
Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

Discover what **AGBU MHS** has to offer!  
Հրամայեցէ՛ք Մեր Վարժարանը

# OPENHOUSE

JANUARY 31, 2015 • 9:30AM

Please RSVP  
CALL OR EMAIL  
**(626) 794-0363**  
SCHOOL@AGBUMHS.ORG

2495 EAST MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104



### ՇՆՈՐՀԱՇԱՏ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ՝ ՄԱՅՔ ՅԱԿՈՒԲԵԱՆ



Մարսէլյի «Լա Ռոզ» գրասպասի մէջ

Իր մասին քիչեր գիտեն: Այսուհանդերձ, որոշ շրջանակներու մէջ ծանօթ է որպէս բնիկ լիբանանահայ ինքնու գեղանկարիչ-արուեստագէտ մը: Մայք (Մկրտիչ) Յակոբեան, փոքր տարիքէն մեծ հետաքրքրութիւն ունեցած է նկարչութեան եւ երգարուեստի մասին: Դպրոցական տարիներէն իսկ աչքառու դարձած է իր գծանկարներով, որոնք կ'արձագոյնացնէին ապագայ շնորհալի նկարիչի մը նախադրեաները: Ան միանգամայն սիրած է նաեւ երգն ու երաժշտութիւնը: Նոյնիսկ յօրինած եւ ձայնագրած է կարգ մը երգեր, նաեւ կազմած է սթրատային նուագախումբ: Շրջան մը եղած է գծագրութեան ուսուցիչ:

Յեղափոխական կազմակերպութիւնը կազմաւորուած էր, իսկ անոր ծրագիրը՝ պատրաստ: Սակայն պէտք էր զայն սերմանել հայ ժողովուրդի կեանքի պարարտ հողին մէջ: Կը պակասը միջոցը, որուն քաջ գիտակից էին հիմնադիրները, ի մասնաւորի՝ Աւետիս Նազարբէկը: Ուստի, Յեղափոխական կազմակերպութեան հիմնադրութենէն ընդամէնը երեք ամիս ետք, 1887-ի Նոյեմբերին, անոնք անձնօրը գոհողութիւններով կ'իրականացնեն նոյն Յեղափոխական կազմակերպութեան պաշտօնաթերթին հրատարակութիւնը: Թերթին անուանակոչութիւնը նմանապէս կը կատարէ Աւետիս Նազարբէկը, ներշնչուելով ուսու ականաւոր յեղափոխական Ալեքսանդր Հերցենի լոյս ընծայած թերթի «Կոլոկոլ»

(զանգ) անունէն, զոր հայացնելով կը կնքէ «Հնչակ» անունով: Շուտով, այս պաշտօնաթերթի անուան ազդեցութեամբ Յեղափոխական կազմակերպութեան անդամները ինքնաբերաբար կը սկսին կոչուիլ Հնչակեաններ, իսկ կազմակերպութիւնը՝ Հնչակեան Կուսակցութիւն: Աւելի ուշ շրջանի է որ Յեղափոխական կազմակերպութիւնը պաշտօնապէս կ'որդեգրէ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն անունը:

Ի դէպ, վերը յիշեցինք, որ Աւետիս Նազարբէկ եւ Մարօ Վարդանեան, երբ 1886-ի ամառը Փարիզէն ժընեւ կը ժամանեն՝ նշանուած էին, բայց յետագային անոնք կ'ամուսնանան 18 Ապրիլ 1888 թուականին քաղաքացիական ամուսնութեամբ, իսկ 1889-ի Օգոստոսին անոնք Փարիզ կը մեկնին,



ուր եկեղեցական արարողութեամբ օրհնել կու տան իրենց ամուսնութեան սուրբ պսակը (14): Աւետիս Նազարբէկ եւ Մարօ Վարդանեան, այսուհետեւ նաեւ՝ Նազարբէկեան, կը բախտաւորուին երկու գաւակներով, որդին կ'անուանեն Վատիա, իսկ դուստրը՝ Պիէլքա (15):

Աւետիս Նազարբէկ իր յեղափոխական գործունէութիւնը եւ «Հնչակ»-ի հրատարակութիւնը ժընեւի մէջ կը շարունակէ մինչեւ 1891 թուականը, ապա, պայմաններու բերումով, կ'անցնի Փարիզ: Ինչպէս ժընեւի, նմանապէս Փարիզի մէջ, որոնք դարձած էին նշանաւոր կեդրոնները ուսու վտարանդի ականաւոր յեղափոխականներու, Նազարբէկ սերտ կապեր կը մշակէ անոնց հետ՝ խորհրդակցելով, բանակցելով ոչ միայն ընկերվարական հարցերու, այլ հիմնականօրէն հայ ժողովուրդի ճակատագրին ու ապագային հետ կապուած կենսական մտահոգութիւններով: Տարի մը Փարիզ մնալէ ետք, Աւետիս Նազարբէկ Հայաստանի աւելի մօտակայ է Հնչակեան գործողութիւններ իրականացնելու անմիջական վայր մը հաստատուելու ծրագրով իր ընտանիքին հետ կը տեղափոխուի Աթէնք: Սակայն, 1894-ին, յունական կառավարութեան վրայ օսմանեան իշխանութիւններու գործադրած ճնշումներուն հետեւանքով, ստիպուած կ'ըլլայ մեկնելու Լոնտոն, ուր կը մնայ մինչեւ 1915 թուականը:

13 Օգոստոս 1895 թուականի Journal de Geneve թերթը իր սիւնակներէն մէկուն մէջ կը հարդորէ հետաքրքրական տեղեկութիւն մը «Ֆրիտրիխ Էնկելսի Յուդարկաւորութիւնը» խորագրին ներքոյ: Լոնտոնէն փոխանցուած սոցիալիզմի գրողութիւնը կը տեղեկացնէ, թէ «Ֆրիտրիխ Էնկելսի յուդարկաւորութիւնը տեղի ունեցած է Շաբաթ, Voking գերեզմանատան

մէջ: Թաղումը կատարուած էր յապաղումով, որոշ ներկայացուցիչներու ուշացումին հետեւանքով, որոնց մէջ նկատելի էին գերմանացի ընկերվարականներէն՝ Տեարք Սինկեր, Լիպքնէխթ, Քանթաթ, Շթութկարթի Neue Zeit թերթի տնօրէնը, Տէր եւ Տիկին Պերնշթայն, ուսուսուս անունով՝ Տեարք Սթեֆանիաք, Վոլքովսքի, Տիկին Վերա Զասուլիչ, հայոց անունով՝ Տիար Նազարբէկ, լեհերուն անունով՝ Տիար Սթանիսլաս Մենտելսոն եւ քոյրը՝ Մարի, իտալացիներուն անունով՝ Տիար Վալերա, Իստեր-նացիոնալի նախկին անդամներէն ոմն, Տիար Ժան-Ֆրանսուա Տը Լասագի, որ կը գլխաւորէր Անգլիոյ սոցիալ դեմոկրատներուն պատուիրակութիւնը:

Մարդկայական ստացուած էին Պերլինէն, Պոտսդամէն, Քէօլնէն,

Ֆրանքֆուրթէն, Տրեստընէն, Պրեմընէն: Մին իր վրայ կը կրէր «Ազատ Ռուսաստան» արձանագրութիւնը. միւսները առաքուած էին իտալացիներուն եւ հայերուն անուններով: Տիար Պէպէլ կը բացակայէր, զինք կը սպասենք այլ հաւաքի մը: [Յուդարկաւորութեան] Կրօնական արարողութիւն չկատարուեցաւ»:

Աւետիս Նազարբէկ սոցիալատարարութեան մէջ նշուած Եւրոպայի սոցիալ-դեմոկրատ գրեթէ բոլոր հեղինակութիւններուն հետ կապի մէջ էր, ու կը ճանչնար զիրենք անձնապէս: Եւ հոս բնաւ պիտի չզարմանայինք, եթէ Ֆրիտրիխ Էնկելսի գերեզմանին Աւետիս Նազարբէկի գետեղած ծաղկեպսակին վրայ ըլլար «Ազատ Հայաստան» արձանագրութիւնը:

Ահա, ընդամէնը տարի մը ետք, այստեղ, Լոնտոնի մէջ է որ դժբախտաբար տեղի կ'ունենան երկու ծանր եւ ցաւալի բաժանումներ, երկուքն ալ 1896 ճակատագրական թուականին: Կուսակցութեան գաղափարախօսութեան եւ արեւմտահայութեան ազատագրական պայքարը իրագործելու հարցերուն շուրջ ստեղծուած լուրջ տարակարծութիւններու առթիւ, կուսակցութիւնը կը պառակտուի երկու հոսանքներու՝ վերակազմեալ Հնչակեաններու եւ Զախակողմեան-Ընկերվարական Հնչակեաններու միջեւ: Առաջինը կը դեկավարէ Արփիար Արփիարեան, իսկ երկրորդը՝ Աւետիս Նազարբէկ: Ափսոս, որ տեղի ունեցած Հնչակեան Կուսակցութեան պառակտումը, լարուած եւ ճնշող տրամադրութիւնները, շրջուտ եւ վտանգաւոր վիճակը կը սրէ նաեւ Նազարբէկեան ամուսիններու յարաբերութիւնը, հասցնելով զայն մինչեւ ամուսնալուծումի (16):

Այս միջոցին, պատմութիւնը



# ՅԻՍՆԱՍԵԱԿԷ՝ ՅԻՍՆԱՍԵԱԿ ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊՈՌԹԿՈՒՄԷՆ ՊԱՅԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԲԵՄԱՐԱԹԱԿ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ

## ՅՈՒՎԱՅՓ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Տարին՝ 1965  
Թուականը՝ Ապրիլ 25.  
Օրը՝ Կիրակի.

Իսկ վաղը՝ Պոմպեյի Սբ. Պետրոս Հայ Առաքելական եկեղեցիին կից «Արարատ» հայապատկան շենքի հինգերորդ յարկին վրայ գտնուող փոքր սրահը:

Այդ սրահին մէջ այդ պահուն հաւաքուած են մօտաւորապէս քսան կամ քսանհինգ տարեց հայեր ու մատի վրայ համրուող մի քանի երիտասարդ ու պատանի, որոնց ամբողջութիւնը կը կազմէ այդ օրերու Պոմպեյի հայ զաղութը: Այդ փոքրաթիւ զաղութի անդամները աշխարհի տարբեր անկիւններէն ու երկիրներէն Հնդկաստան հաստատուած ու հոն ապրող հայեր են: Հոն են այդ պահուն տէր եւ տիրին Հայկ Գալայճեանները, մայր ու դուստր Լէմոնճեանները եւ այլի Տիկին Ալեանաքը Կ.Պոլսէն, Ռոպէն Շամլեանը եւ Աբգարեան ամուլը Պէյրութէն, պանդոկատէր Տիկին Ռոզ Պաղիլը, Տիկին Քլարա Մէհթեան եւ Տոթթոր Արամ Եղիազարեանը Զուղայէն, Տիկիններ Թամարա Կոմէզը եւ Նուարդ Էքնէյեանը Թեհրանէն, Տիկին Վարդուհի Լորտը՝ Վանի վերապրողներէն, Տէր Վազգէն քահանայ ու երէցկին Ստեփանեանները Հալէպէն: Իսկ իր հակայ ու յաղթամարմին հասակով, քիչ մը շուարած վիճակի մը մէջ, սրահին կենդրոնը կանգնած է Սոփեա Միտլիան Գերագոյն Խորհուրդի եւ Հայաստանի Գիտական Ակադեմիայի անդամ, աշխարհաբան-չափ մաթեմատիկոս Սէրգէյ Մերկլեանը, որ Հնդկաստանի պետութեան հրահրով պաշտօնական առաքելութեամբ նոր Պոմպեյ ժամանած է Երեւանէն: Յաճ ձայնով երբեմն բառ մը կը փոխանակէ ազգութեամբ ռուս իր կնոջ հետ, միաժամակ ռուսերէն հակիրճ բացատրութիւններ տալով իրենց ընկերացող սովետական հիւպատոսարանէն պաշտօնատարի մը:

Սբ. Պատարագը նոր վերջացած է ու ամէնքս հիմա հաւաքուած ենք վերնայարկի սրահին մէջ մասնակցելու Ապրիլեան Եղեռնի յուշահանդէսին. ամէնքս տակաւին կը գտնուինք մեր Ապրիլեան նահատակներու խնկելի յիշատակին նուիրուած հոգեհանգստեան արարողութեան ծանր տպաւորութեան տակ ու սրահին մէջ խոր լուսթիւն մը կը տիրէ:

Առաջին խօսք առնողը Տէր հայրն է: Ներկաներուն կը բացատրէ թէ ինչու՞ հոն հաւաքուած ենք այդ օրը: Պերճախօս անձնաւորութիւն մը չէ տէր հայրը. կը խօսի կարճ, անպաճճու բայց համայնական վիշտն ու ցաւը կ'արտայայտուին իր յուզուած ձայնին մէջ: Ներկաները գլխիկոր մտիկ կ'ընեն՝ կորսուած իրենց խոր մտածմունքներուն մէջ:

Կարգով ուրիշներ եւս խօսք կ'առնեն: Պրն. Սեդրակ Աբգարեանը, ասպարէզով փաստաբան, կէս անգլերէն ու կէս հայերէն ուղերձ մը կը կարդայ: Ատամնաբոյժ տոթթ. Արամ Եղիազարեանը կ'արտայայտուի 1915ին պատահած եղեռնական դէպքերուն մասին ու կը յիշէ մանկութեան ապրած դժուար տարիները: Տիկին Ռոզ Պաղիլ, իբրեւ զաղութի հոգաբարձութեան ատենապետուհի, իր կարգին աւուր պատշաճի երկու խօսք կ'արտասա-

նէ: Ամէն մարդ յուզուած է ու մեզմէ իւրաքանչիւրը խորապէս կը գիտակցի այդ պահուն ստեղծած հոգեկան եւ զգացական տագնապին: Բայց բոլորին ուշադրութիւնը կենդրոնացած է հիմա Սէրգէյ Մերկլեանի վրայ: Արդեօք ի՞նչ պիտի ըսէ բարձաստիճան հայրենի հիւրը, որ անակնկալ կերպով այդ առաւօտ մեր մէջ կը գտնուի: Ի՞նչպէս պիտի արտայայտուի Սոփեա քաղաքացին, պետական կարգուսարքի անդամ, գիտական շրջանակներու մէջ հռչակ վայելող այս հայը, որ ներկայ գտնուելէ ետք վաղը եկեղեցիին մէջ մատուցուած Սբ. Պատարագին, հիմա եկած է միանալու սփիւռքի տարածքին կորսուած փոքրաթիւ զաղութի մը անդամներուն՝ վերջիջու համայնական հայու գողգոթան:

Ճառերէն ու ուղերձներէն ետք կրկին լուսթիւն մը տիրած է փոքր սրահին մէջ խօսք կը տրուի մեծարգոյ հիւրին: Ամէն մարդ կը սպասէ: Իսկ ինքը Մերկլեանը շուրջը կը դիտէ: Յայտնի չէ թէ ինչի՞ կը սպասէ իր խօսքը ըսելու: - Իմ խօսքէն առաջ, կ'ըսէ վերջացած հայրենի հիւրը, արդեօք ներկայ երիտասարդներէն ոեւէ մէկը չէ՞ր ուզեր բան մը ըսել:

Այս անգամ մենք, տեղացիներս, անճրկած ենք: Ոչ ոք այդ մասին մտածած էր նախապէս: Երբ շուրջը 70ի կամ 80ի մօտեցող անձեր կան որքան յարմար է երիտասարդի մը կամ նորափթիթ պատանիի մը խօսք տալ այդ առիթով: Գոնէ ներկաներուն մեծամասնութիւնը այդպէս կը մտածէր այդ օրերուն...:

Այս չփոթած լուսթիւնը մի քանի ռոպէ տեւեց: Մենք, այսինքն հոն ներկայ եղող երիտասարդ ու պատանի, նոյնքան շուարած կեցած ենք անկիւն մը ու իրարու երեսին կը նայինք: Վերջապէս, Տիկին Ռոզ Պաղիլ, հոգաբարձութեան ատենապետուհի իր հանգամանքով, մեզի դառնալով կ'ըսէ:

- Տղա՛ք, եթէ ըսելիք ունիք ահա՛ առիթը ձեզի: Կրկին լուսթիւն: Հակառակ եղած հրահրին ոչ ոք տեղէն կը շարժի: Վերջապէս համարձակութիւնս ի մի հաւաքելով քայլ մը յառաջ կու գամ: - Ճառի փոխարէն կ'ուզեմ ոտանաւոր մը արտասանել, կ'ըսեմ ես. կ'ըլլա՞յ:

Ամէն կողմէ քաջալերանքի խօսքեր կը լսուին: Երկվայրկեանի մը մէջ որոշած էի արդէն թէ ինչ պիտի արտասանեմ: Հանդարտ կը սկսիմ:

- Համօ Սահեան՝ «Հայաստանը Երգերի մէջ»:

Յարաբերաբար երկար բանաստեղծութիւն մըն է ու կարելի չէ այդ պայմաններուն մէջ այդ կտորը ամբողջութեամբ արտասանել:

Հետեւաբար, պատշաճեցուած տարբերակ մը կ'ընտրեմ մտովի, զոր դարձեցական տարիներուս կը սիրէի հանդէսներուն արտասանել: Օտարութեան մէջ, այդ տարբերակը կը սիրէի յաճախ մտովի կամ բարձրաձայն կրկնել ու անկէ հոգեկան ոյժ մը եւ սփոփանք մը կը ստանայի ամէն անգամ: Ուրեմն ինձի ծանօթ այդ տարբերակը կ'ընտրեմ արտասանելու համար: Ետեւոր ժամանակ, որքեք երգ մըն է, մեր ժողովուրդի ապրած անցեալի տխուր դէպքերու կրկնեցող: Այդ մասը կ'անցնի ճշուած ու խոր

լուսթեան մը մէջ ու կը սկսիմ երկրորդ մասին, որ այդ օրերու տիրող հայրենասիրական ոգիին աւելի կը համապատասխանէր թէ՛ շեշտով եւ թէ՛ բովանդակութեամբ: Նոր Հայաստանի գովաբանութիւնն էր, աւելի լաւատես ու ինքնավատահայութեան մը պատկերը՝ Համօ Սահեանի խօսքերով:

«Կանգնած դաշտում Արարատեան Մէջբոյնեմ Արագածին Ակամատես եւ ունկնդիր Աշխարհների անցուդարձին»

Լոյս է փամու՛մ իր գետերից Ոգորումով իր անխափան, Լուսաւորում իր խոր հոգին, Իր տուն, իր կեանքն ու իր ցամաքն,

Եւ տեղեւոյ, իմն իրեցից Հազար անգամ հօրացած, Մեղր է փամու՛մ փշից անգամ եւ կարկառից՝ զինի ու հաց, Նոսն հիւր է փամու՛մ փարից Իր սիւնաքարձ քերթերի մէջ: Այսպիսի՛ն է Հայաստանը Մեր նորօրեայ երգերի մէջ»:

Հազիւ արտասանութիւնը վերջացուցած էի Սէրգէյ Մերկլեանը վրաս խոյացաւ, փաթթուեցաւ ինձի ու կարծէք ինքզինքը մոռցած՝ կը կրկնէր:

- Ապրի՛ս երիտասարդ, ապրի՛ս երիտասարդ:

Հիմա կը ժպտէր: Իր այդ ժպիտը կարծես մթնոլորտը թեթեւեցուց: Քիչ մը առաջուց այդ ճնշուած տիրութիւնը փարատած էր ու Մերկլեան վերջապէս խօսք առաւ:

Մանրամասնօրէն չեմ յիշեր թէ ինչ ըսաւ Սէրգէյ Մերկլեան այդ օր: Բայց հիմնական խորքը իր խօսքին վերածնուած Հայաստանի եւ հայ ժողովուրդի ներկայի եւ ապագայի նկատմամբ լաւատես մարդու մը արտայայտութիւնն էր, իր ոտքին տակ հայրենի հող ունեցող մարդու, ինչպէս նաեւ գիտութեան, զարգացումի եւ յառաջընթացի մէջ գտնուող հայ մարդու գիտակցութեանն ընդ լաւատեսութիւն մը եւ ինքնավատահայութիւն մը, որոնք նոր շունչ տուին այդ սրահին մէջ հաւաքուած ներկաներուն:

Այդ Ապրիլ 1965 թուականին Պոմպեյի զաղութին կազմակերպած սգահանդէսը տեսակ մը մանրանկարն էր սփիւռքի տարածքին ամէն տարի կրկնուող այն ձեռնարկներուն, որոնք տեղի կ'ունենային Ապրիլեան Եղեռնի նահատակներու յիշատակը յարգելու համար: Այսպիսի առիթներուն յայտագրին մաս կը կազմէին մի քանի

ճառախօսութիւններ, մի քանի հայրենասիրական արտասանութիւններ, երգ ու նուագ, ու ապա 365 օրերու լուսթիւն մը... մինչեւ յաջորդ Ապրիլ 24:

Սակայն Ապրիլեան Եղեռնի Յիշատակի առիթով կազմակերպուած այդ ձեռնարկները տարբեր բնույթ մը գրեցան 1965 թուականին եւ ԱՆԿԷ ԵՏՔ: Մինչեւ այդ հանգրուանային թուականը սփիւռքի տարածքին գործող եւ գերիշխող հայ կազմակերպութիւնները, միութիւնները եւ յարանուանական իշխանութիւնները ընդհանրապէս առանձնաբար եւ անկախաբար, կը կազմակերպէին այդ յուշահանդէսները կամ սգահանդէսները որոնց ներկայ կը գտնուէին իրենց հետեւորդները կամ համակիրները: Սակայն առաջին անգամ ըլլալով, Ապրիլեան Եղեռնի Յիշատակի առիթով, 1965 թուականին, ապրիլեան հայ նահատակներու յիշատակութեան միակամ տօնակատարութիւնները իրարու կը շղթայէին Պէյրութէն Փարիզ, Հալէպէն Նիւ Եորք, Թեհրանէն Լոնտոն, ու Մոսկուայէն Երեւան ցրուած հայութիւնը առանց աշխարհագրական ստորաբաժանումներու, առանց կուսակցական, խմբակցային եւ յարանուանական պիտակներու. ամէն մարդ վերջապէս կը գիտակցէր թէ ՀԱՄԱՋԳԱՅԻՆ տարողութեամբ աղէտ մը պատահած էր հայ ժողովուրդին եւ թէ աշխարհագրական տեղադրումները չէին որ այդ համայնական ցաւի եւ կորուստի զգացումը կամ գիտակցութիւնը կրնային նուազեցնել հայ ժողովուրդի գանազան խաւերուն մօտ: Արդարեւ, Պոմպեյի այդ փոքրաթիւ տարրերու աշխարհագրական պատկանելիութիւնը ինքնին ցոյց կու տար թէ որքան լայն եւ խորունկ ազդեցութիւն մը ունեցած էր Եղեռնը հայ ժողովուրդի ցրուածութեան տեսակէտէն եւ թէ անոր հետեւանքով ինչպիսի հոգեկցութիւն մը ստեղծուած էր մինչ այդ իրարու անծանօթ հայ ժողովուրդի տարբեր խաւերուն կամ մասնիկներուն միջեւ: Կարեւոր եւ նշանակալից երեւուցի մը եւս ի յայտ կու գար այդ տարի: Ի տարբերութիւն նախկին տարիներուն, սփիւռքի տարածքին այդ Ապրիլ ամսուայ ընթացքին կազմակերպուած ձեռնարկները այլեւս պարզապէս սգահանդէսներ կամ յուշահանդէսներ չէին, այլ բողոքի, արդարութեան եւ պահանջատիրութեան պոռթկումներ, որոնք քաղաքական աքթի մը բնույթը ունէին: Այդ պոռթկումներուն

Շարք էջ 19

OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէ՛ն հեռաձայնել՝  
(626) 398-0506



«ԿԵԱՆՔ ԶԿԱՅ...»

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

«Եկեղեցիէն Յոյս Առաւ Հայ Ժողովուրդը» Արամ Ա. Վեհափառ Հայրապետ

1980-ական տարիներուն էր, Պէյրութ: Համալսարանական ուսանողներ էինք: Արաբական ծոցի տարածաշրջանէն մեծ գործարարներու ներկայացուցիչներ կը հանդիպէին ուսանողներու հետ եւ կը ջանային համոզել մեզ՝ մեկնելու այս երկիրներ՝ աշխատանքային կարեւորութիւններու համար: Եթէ մէկ-մէկ կը թուէին աշխատանքային տուեալները, պայմանները ու առաւելութիւնները, բայց կը յտակացնէին նաեւ, թէ տարածաշրջանին մէջ «կեանք չկայ», բայց կայ «աշխատանք», նաեւ՝ «վարձատրութիւն»:

Հասկնալով հանդերձ անոնց անկեղծութիւնը, պէտք էր նաեւ փորձէինք հասկնալ, թէ ինչ կրնայ նշանակել «կեանք չկայ»: Ու տակաւին, որպէս երիտասարդներ ու կեանքին սեմէն նոր մտած տաքարիւն հայեր, բնականաբար պիտի ուզէինք կերտել մեր ապագան, բայց նաեւ՝ ապրելով կեանքը: Եւ այս իրականութիւնները եթէ մեզ մէկ կողմէ կը քաջալերէին, բայց նաեւ տարակուսանքի մթնոլորտ կը ստեղծէին մեր երիտասարդական տրամադրութիւններուն մէջ:

Եւ չեմ գիտեր, թէ նախախնամութիւն էր, թէ՞ ոչ, եւ կամ՝ պատահականութիւն պարզապէս: Իւրաքանչիւրիս կեանքը ունեցաւ իր ընթացքը՝ կամովի՞ն, թէ՞ այլ, ատիկա տարբեր հարց, սակայն յստակ է, որ վերջին քսանհինգ տարիները (եւ մինչեւ այսօր) պիտի աշխատէի Արաբական ծոցի մէջ, ուր ապրած իւրաքանչիւր տարուան հետ պիտի փորձէի մէկ-մէկ «քակել» անցեալի ուսանողական տարիներուն մեզի տրուած պատուէրը, թէ՛ «կեանք չկայ», որպէսզի բացայայտէի, թէ ինչո՞ւ եւ ո՞ւր «կեանք չկար»: Բայց արդեօք ի՞նչն էր, որ կեանքին կու տար արժէք եւ կը ճշդէր անոր ըլլալ-չըլլալը: Ու տակաւին, ի՞նչն էր աշխատանքի տարողութիւնը ու անոր կերտած արժէքը կեանքին մէջ, հապա վարձատրութիւնը...:

Ու կեանքի փորձառութիւնը երեւի պիտի սորվեցնէր, թէ «կեանքը» կերտող ու կերտող իրականութիւն է...: Եւ այս՝ եթէ մէկ կողմէ անհատական ու ընտանեկան, բայց նաեւ՝ հաւաքական: Եւ այս կերտող ու կերտելու իրականութիւնը մարդուն կեանքին իմաստ տուող հասկացողութիւն է, եւ՝ հաւաքական կեանքի մէջ մասնակից դառնալու գրաւական, որ կը լիցքաւորէ եւ նպատակ ու նշանակութիւն կու տայ իւրաքանչիւրիս: Այս նպատակակէտը նշանակութիւն է, որ յոյս կը ներմուծէ մարդու ու հաւաքականութեան կեանքերուն մէջ եւ կը փորձէ նայիլ «վաղուան»՝ աւելի լաւ կերտելու տեսլականով:

Եւ Արաբական ծոցի շրջանի երկիրներու մէջ «կեանք չկայ»-ի իրականութիւնը սկսա՞յ տեսնել այս պրիսմակէն եւ վերջին քառորդ դարուն ապրած իրականութեան փորձառութեանէն: Սկսա՞յ սորվիլ եւ սորվելով ալ ապրիլ այն իրականութիւնը, թէ կեանքը կ'ըլլայ ու կը կերտուի, եթէ կայ տրամադրութիւնը եւ վճռականութիւնը, թէ նոյնինքն կեանքը կարելի է «ապրել» ու «ըլլալ»...

Բայց արդեօք ասիկա նաեւ հայուն փորձառութիւնը չէ՞ աշխարհով մէկ, յատկապէս՝ Յեղասպանութեան արհաւիրքէն ետք, երբ հայը կառչեցաւ կեանքը ապրելու եւ նոյն կեանքով ըլլալու իրականութեան: Հայը՝ իր անհատական ինքնութեամբ, եւ՝ անպայմանօրէն հաւաքական...: Այս նոյնքան իրական է, եւ ապրուած փորձառութեամբ Արաբական ծոցի տարածաշրջանին մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պատգամը՝ Ապու Տապիի նորակառոյց Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ օժման արարողութեան ընթացքին, ուրբաթ, 12 դեկտեմբերի 2014-ին, արդէն իսկ կը հիմնաւորէ հայուն կեանքը ապրելու եւ ըլլալու միտք բանին: «Եկեղեցիէն յոյս առաւ հայ ժողովուրդը...», որովհետեւ հայը իր կեանքը ապրեցաւ ու տակաւին՝ այս յոյսով... Եւ այս յոյսին մէջ ու անոր միջոցով՝ «կեանք չկայ» վերածեց «կեանք կայ»-ի: Եւ թէ՛ հայը կերտեց իր անհատական ու



ընտանեկան կեանքը ու անոր բարորութիւնը, բայց նաեւ տքնեցաւ հաւաքական կեանքի իրականացման ի խնդիր, որովհետեւ այդ հաւաքական կեանքին մէջ տեսաւ իր ապրելու հրամայականը: Եւ այս մեծ գաղութներէն սկսած մինչեւ ամէնէն փոքրը՝ թուային թէ այլ հաշուարկներով:  
Եւ Ապու Տապիի փոքրաթիւ

հայկական գաղութին ապրելու այս յոյսը եւ իրականութեան վերածելու գալն՝ ապրուած ու ապրելու տենչին ձգտող լաւագոյն փորձն է: Բայց կայ նաեւ աւելին: Ապու Տապիի փոքրաթիւ գաղութին ապրելու այս տենչը հիմնաւորուած էր պատմութեան կերտած յաջող փոր-

Շաբ.ը էջ 18

ՊՈԼՍԱՆԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ  
Կը հրապարակ Ժողովուրդը  
ՅՈՒՇ ԵՐԵՎՈՅԻ ՄԸ  
ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ  
Շնորհում՝ Հրանդ Տինքի Հոգիի Ազատութեան Եւ Արդարութեան Տարեկան  
Երկրորդ Շքանշանը

ՊԱՏՄԱԲԱՆ, ԸՆԿԵՐԱԲԱՆ ԵՒ ԳԼԱՐՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՍՈՒԿԱՐ  
ԱՄՊԻՈՆԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ՆԱԽԳԱԶ՝  
ՓՐՕՖ. ԹԱՆԷՐ ԱՔՉԱՍԻ

Պիտի գեկուցէ ՓՐՕՖ.՝ ՐԻՉԸՐՏ ՀՐԱՅՐ ՏԷՔՍԷՃԵԱՆ

Հարաւային Գալիֆորնիոյ (USC) Համալսարանի Քաղաքական Գիտութիւններու ամպիոնին, նաեւ, նոյն համալսարանին Հայոց Յեղասպանութեան Ուսումնասիրութեանց Հիմնարկի Հիմնադիր Եւ Տնօրէն

Եւ իր ընտանիքով՝  
«ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿ  
ԵՐԿՈՒ ԱՐԴԱՐ ՉԱՅՆԵՐ: ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ԵՒ ԹԱՆԷՐ ԱՔՉԱՍ»

Բացման Խօսք՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան  
Հոգաբարձու Եւ Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Մշակութային Ցանձնախումբին (Հայերէնով)

Հանդիսավար՝ Իրաւաբան ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ  
Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան Եւ Փոխ Ատենապետ Հայ Իրաւաբաններու միութեան  
«Շքանշանի տուչութեան պիտի յաջորդէ՝ Երկիսուսթիւն Եւ Հարց Պատասխան, Փրօֆ. Արշալի Եւ  
Իրաւաբան Մինասեանի ի հետ  
Գեղարուեստական Ցայտազիր  
Կիրակի, Յունուար 18, 2015, Երեկոյեան ժամը 6:00ին  
Պոլսահայ Միութեան «Գրիգոր Եւ Աւետ Քիրքչիւօղլու» սրահին մէջ  
19726 Sherman Way, Winnetka, CA 91306  
Տեղեկութեանց համար հեռաձայնել Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976 (cell)



### ՄԻԿՐԵՆԻ ԳԼԽԱՑԱԻԵՐԸ ԱՌՆՉՈՒՄԸ ԵՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԴԵՊՔԵՐՈՒ ՅԵՏ

Փորձագետներ նախապես պարզած են թէ մանկութեան ընթացքին չարաչառութիւն կամ արհամարհանքի ենթարկուած անձեր կրնան հետագային դիմագրաւել հոգեբանական եւ բժշկական հարցեր: Մանուկներու չարաչառութիւն ծիրին մէջ կատարուած նոր ուսումնասիրութիւն մը ցոյց տուած է թէ չարաչառութեան հասակին միկրէնի գլխացաւերէ տառապելու հաւանականութիւնը յատկապէս բարձր է մանկութեան ընթացքին չարաչառութիւն ենթարկուած անձերու մօտ:

Միացեալ Նահանգներու մէջ տարեկան վեց միլիոն փոքր եւ պատանիներ կ'ենթարկուին ֆիզիքական, զգացական կամ սեռային չարաչառութիւնի՝ չարաչառութեան կողմէ: Ըստ պաշտօնական յայտարարութիւններու, երկրին մէջ իւրաքանչիւր տարու երկվայրկեան փոքրիկ մը կ'ենթարկուի չարաչառութեան: Քանի մը տարիներ առաջ, հոգեբանական հետազոտութիւններ յայտնաբերած են թէ չարաչառութեան ենթարկուող փոքր եւ մօտ յաճախադէպ են ուժեղ գլխացաւեր: Սակայն այս հետազոտութիւնները կը թերանան ճշդելու գլխացաւերու բնոյթը եւ տեսակը:

Նիւ Եորքի մէջ գտնուող Ալպերթ Այնշթայնի անուան բժշկական համալսարանի եւ Մոնթեֆորտի Գլխացաւերու Կեդրոնի աշխատակիցներէն՝ Տաուն Պիոլոզի գլխացաւերու կատարուած ամերիկեան ուսումնասիրութիւնը կը ջանայ քննել կապը՝ միկրէնի գլխացաւերու եւ չարաչառութեան միջեւ: Ուսումնասիրութեան արդիւնքները յայտնաբերած են թէ մանկու-

թեան կամ պատանեկութեան ընթացքին զգացական չարաչառութիւնը կրնայ մինչեւ 33 առ հարիւր համեմատութեամբ բարձրացնել միկրէնի գլխացաւերէ տառապելու հաւանականութիւնը 18 տարեկանէն ետք:

Ըստ Neurology ամսագրին, այս ուսումնասիրութիւնը նկատի ունեցած է մօտաւորապէս տասը հազար մասնակիցներ: Ուսումնասիրութիւնը նախաձեռնուած է 2007 թուականին եւ աւարտած է 2014-ին: Ուսումնասիրութեան առաջին հանգրուանին մասնակիցները ամբողջացուցած են Childhood Trauma Questionnaire-ը, որուն հիման վրայ հետազոտները գնահատած են անհատին մանկութեան չարաչառութեան դէպքերը:

Միկրէնի տառապող մասնակիցներու մօտաւորապէս 25 առ հարիւրը իրենց մանկութեան ընթացքին ենթարկուած են զգացական չարաչառութեան, իսկ միկրէնի գաւառայլ գլխացաւերէ տառապող անձերու 21 առ հարիւրը նոյնպէս ենթարկուած է այս տեսակ չարաչառութեան: Արդիւնքները նաեւ ցոյց տուած են թէ՛ երկու տեսակ չարաչառութեան ենթարկուած անձերու մօտ միկրէնի գլխացաւերէ տառապելու հաւանականութիւնը կրնայ հասնիլ մինչեւ 80 առ հարիւր համեմատութեան:

Պիոլոզի հետազոտական խումբը դիտել կու տայ թէ այս ուսումնասիրութեան պարագային մանկութեան ընթացքին չարաչառութիւնը առնչուած է անձկութեան (anxiety) եւ ընկճուածութեան (depression) հետ:

### ՀՈԳԵԿԱՆ ԳՆՏՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒԱՆՑՈՒՄԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Կեանքի ընթացքին հոգեկան ցնցումները անխուսափելի են: Բոլոր մեր մանկութեան կամ պատանեկութեան ընթացքին, ինչպէս նաեւ չարաչառութեան ենթարկուած ենք հոգեկան ցնցումներու, սակայն անոնց սաստկութիւնն է, որ կը տարբերի: Ոմանք կ'ենթարկուին սաստիկ ցնցումներու, իսկ ուրիշները միջին կամ շատ մեղմ հոգեկան կամ զգացական ցնցումներու:

Մասնագէտներու համաձայն՝ հոգեկան ցնցումները կամ trauma-ները ունին քանդիչ եւ կառուցողական յատկանիշեր: Սաստիկ հոգեկան ցնցումները կրնան պատճառ դառնալ հոգեկան հարցերու, ինչպէս՝ ընկճուածութեան, իսկ մեղմ կամ միջին ցնցումները կրնան զօրացնել անհատին դիմադրողականութիւնը:

Այս գծով նախապէս կատարուած հոգեբանական եւ ծինային հետազոտութիւնները պարզած են թէ հոգեկան ցնցումներու վատ յատկութիւնները կրնան փոխանցուիլ սերունդէ սերունդ: Այլ խօսքով, հոգեկան ցնցումներու ենթարկուած անհատներու զաւակները մեծ հաւանականութիւն կրնան ունենալ տառապելու զգացական հարցերէ, անձկութենէ, ճնշուածութենէ եւ ընկճուածութենէ:

Հոգեկան ցնցումի սերունդներու միջեւ փոխանցման գծով կատարուած նոր փորձարկումներ

պարզած են թէ վատ յատկանիշերու կողքին, ցնցումներու դրական հետեւանքները եւս կրնան ծինարու դրութեամբ փոխանցուիլ անհատի մը զաւակներուն: Այսինքն՝ եթէ անհատ մը ենթարկուելով հոգեկան ցնցումները յաջողած է անոնց դիմադրել եւ շրջանցել, այս յատկութիւնը կրնայ փոխանցել յաջորդող սերունդին:

Այս հետազոտութիւնը կատարուած է Ջիլրիխի համալսարանի հետազոտական խումբին կողմէ: Նորագոյն ուսումնասիրութեան շնորհիւ գիտնականները յայտնաբերած են մոլեգիւլներ, որոնք կրնան փոխանցել հոգեկան ցնցումներու դրական յատկանիշերը: Գիտնականները այս փորձարկումը կատարած են մոլեկերու մասնակցութեամբ, որոնցմէ մաս մը ծնունդէն ետք բաժնուելով իր մօրմէն ենթարկուած է հոգեկան ցնցումի:

Հետաքրքրական է հետազոտութեան արդիւնքը, ըստ որուն՝ ճնշուածութեան եւ ցնցումներու ենթարկուած մոլեկերն ու իրենց զաւակները աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծեն իրենց ներկայացուած խնդիրները: Գիտնականները կը շնչեն թէ յատկապէս մանկութեան ցնցումները բնաւ դրական չեն եւ նախընտրելի է, որ անոնք չպատահին: Կեանքի ընթացքին միջին եւ մեղմ ցնցումները կրնան օգտակար ըլլալ:

### ԵՐԱՎՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՄԵՂ ՈՒՏԵԼԻՔԻ ԲԱՂԱԴՐԻՉ

Միացեալ Թագաւորութեան մէջ գտնուող Օքսֆորտի համալսարանի հետազոտները իրենց հետեւողական ուսումնասիրութիւններուն շնորհիւ կը ջանան յայտնաբերել կապը՝ երաժշտութեան եւ ուտելիքի համի ըմբռնումին միջեւ: Հետաքրքրական է, որ երաժշտութեան տարբեր յատկանիշերը կրնան տարբեր ազդեցութիւն ունենալ համի ըմբռնումին վրայ: Ուսումնասիրութեան արդիւնքներուն համաձայն՝ բարձր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւնները, որոնք մէջ օրինակի համար կ'իշխէ սրինգը, կը շնչեն ուտելիքի քաղցրութիւնը եւ թթուութիւնը: Իսկ ցած ձայնաստիճանի պատկանող երաժշտութիւնները կը շնչեն լեղի համը:

Այս ուսումնասիրութեան գլխաւոր հեղինակն է հետազոտ՝ Չարլզ Սթէյնս, որ կը բացատրէ թէ իր այս ուսումնասիրութեամբ ան կը փորձէ ցոյց տալ թէ ըմբռնումի եւ յատկապէս համերու ըմբռնումի ժամանակ մէկէ աւելի զգայարաններ կը գործեն միեւնոյն ժամանակ: Հետեւաբար, ըմբռնումը պարզապէս մտային աշխատանք մը համ զգացում մը չէ, այլ՝ փորձառութիւն է: Սթէյնս իր ուսումնասիրութեան որպէս առարկայ ընտրած է համերու ըմբռնումը, որովհետեւ ան կ'ենթարկէ թէ յատկապէս համերու ըմբռնման ժամանակ է, որ զանազան զգայարաններ կ'օգտագործուին:

Ուտելիքի համի փորձառութեան մէջ ձայներու եւ երաժշտութեան կողքին մեծ դեր ունի նաեւ

ուտելիքին կազմուածքը: Երբեմն մարդիկ կը մերժեն ուտելիքը պարզապէս որովհետեւ անոր կազմուածքը հաճելի չի թուիր իրենց: Այս ուտելիքներու ամէնէն լաւ օրինակներէն է իսկ արմաւը կամ խիտուշը: Իսկ այլ ուտելիքներու պարագային, անոնց կազմուածքն է, որ հաճելի կը դարձնէ համը: Օրինակ ճէլոն, չիփսը, զովացուցիչ խմիչքները մաս կը կազմեն այս ուտելիքներու կամ ըմպելիներու շարքին:

Յաւելեալ բացատրութիւններ տալով իր կատարած հետազոտութեան մասին, Սթէյնս դիտել կու տայ թէ ծովափին վրայ ձուկ ուտելը աւելի հաճելի է քան տան խոհանոցին մէջ ուտելը, որովհետեւ ձուկերու եւ ծովային պտուղներու հետ կապուած ծովուն ձայները կը շնչեն ուտելիքին համեղութիւնը: Իր կատարած ուսումնասիրութիւններու ընթացքին, Սթէյնս յաճախ խնդրած է մասնակիցներէն, որ ուտելիքի համեր կապեն տարբեր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւններու հետ:

Ուսումնասիրութեան արդիւնքներէն մէկնելով, Սթէյնս եւ իր հետազոտական խումբը կ'ըսեն թէ երաժշտութեան միջոցով կրնան 5-էն 10 համեմատութեամբ ազդել համի ըմբռնումին վրայ: Հետեւաբար, սոսնակայն օրերուն կարելի է ի մտի ունենալ Սթէյնսի կատարած այս հետազոտութիւնը եւ ընթրիքի ժամանակ անպայման միացնել ձայնաստիճանը կամ հիւրերու նախափրած երաժշտութիւնը:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

### ՄԱՐՄՆԻ ՅԱԻԵԼԵԱԼ ԿՇԻՌՔԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԲՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԵՏԵՒԱՆՔԸ

Տօնական օրերէն ետք սովորական երեւոյթ մըն է մարմնի կշիռըով մտահոգուելու հոգեվիճակը: Մարդիկ յաճախ առնուազն քանի մը քիչ կորսնցնում կը գիտնան այս շրջանին, իսկ սոսնակայն օրերու աւարտէն ետք կը փորձեն վերատիրանալ իրենց մարմնի սովորական կշիռը: Այս աշխատանքին մէջ անհատի ջանքերուն կողքին, նաեւ դեր ունի անհատին միջավայրը՝ ընտանիքը, ընկերները, բարեկամները, որոնք կը փորձեն օգնել անոր:

Երբեմն մարդոց օգնելու աշխատանքները կ'ըլլան ի գուր կամ կը ծառայեն այլ նպատակներու: Կարգ մը պարագաներու, օգնելու փոխարէն մարդիկ անգիտակցաբար կրնան վնաս հասցնել անհատին: Ամերիկեան Personal Relationships ամսագիրը անդրադարձած է նոր հետազոտութեան մը, որուն համաձայն՝ մարմնի կշիռի գծով քննադատութիւնները կրնան ժխտական հետեւանքներ ունենալ անհատին վրայ: Ըստ մասնագէտներուն երբ վատ զգանք մը մարմնի կշիռին համար, կը դիմենք մեր ընկերներուն, կողակիցին եւ ընտանիքի անդամներուն: Սակայն

անոնց մեկնաբանութիւններն ու քննադատութիւնները կրնան աւելի վատ զգացնել մեզ: Հետաքրքրական է, որ Ուոթըրլուի համալսարանի կողմէ կատարուած ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց տուած են թէ այս քննադատութիւնները կրնան պատճառ դառնալ որ անհատը յաւելեալ կշիռ աստանայ: Այլ խօսքով՝ օգտակար դառնալու փոխարէն, անոնք կը վատթարացնեն կացութիւնը: Նոյն ուսումնասիրութիւնը ցոյց տուած է թէ իրենց կշիռին վերաբերեալ դրական խօսքեր ստացող կիներու մօտ բարձր է կշիռը պահպանելու կամ նուազեցնելու հաւանականութիւնները:

Հետազոտները իրենց ուսումնասիրութեան արդիւնքները բացատրելով կ'ըսեն թէ դրական խօսքերու ենթարկուող կիներու մօտ կը պակսի ընկերութեան կողմէ ընդունուելու ճնշուածութիւնը, որուն պատճառով անոնք աւելի գիտակից կը դառնան իրենց ուտելիքներուն: Հակառակը կը պատահի քննադատութիւններ ստացող կիներու պարագային, որոնք յուսախափութեան եւ յաւելեալ ճնշուածութեան հետեւանքով կը դիմեն ուտելիքի:



### 100 ԱՄԵԱԿ. ԿԱՐԵՒՈՐԸ ՍՈՒԳՐ ՄԵՐ ՄԱՐՄՆԵՆ ԴՈՒՐՍ ՅԱՆԵՆՔ

Շարունակում էք 6-էն

նոյն յառաջանքը կը լսուի՝ «շուն թուրքը ջարդեց մեզի», կամ «էր-տողանը նոյն թուրքն է», կամ «թուրքին չենք կրնար վստահիլ»:

Այս տիլէմաները (երկրնտ-րանք-խմբ.) մեզ նոյն ցեխին մէջ պիտի պահեն: Իսկ այն քանի մը միլիոնները, որ ցեղասպա նութեան յիշատակումի օրերուն Հայաստան պիտի հոսին լուծումներ չեն կրնար բերել ծանր ինդիւրներու տակ կբած մեր երկրին համար:

Յեղասպանութիւնը եւ Հայաստանը տարբեր ուղիներու վրայ են: Եւ անոնք երբեք իրարու պիտի չհանդիպին: Հայաստանին կեանք է պէտք, իսկ բոլոր անոնք, որոնք կոճակի հարուածներու տակ կը խոստանան լուծումներ բերել մեր հաւաքական ինդիւրներուն կը ստեն:

Այս տարի 5-րդ տարին ըլլալով Հայաստանի կամաւոր երիտասարդները Ծիղեռնակաբերդ տարուած մեխակները եւ վարդերը ոչնչացումէ «պիտի փրկեն» ու քարտի վերածեն: Յեղասպանութեան օրը Ծիղեռնակաբերդի բարձունքներու տարուելիք ծաղիկներու քանակը այս տարի չորս հարիւր քիլոկրամի պիտի հասնի: Կամաւորները ցողունը պիտի գատեն վարդերու եւ մեխակներու թերթիկներէն ու կոկիկ ձեւով դնեն

Թոյլերու մէջ, որպէսզի անոնցմէ յիշատակի քարտեր պատրաստեն:

Բացի ասկէ երեւի աշխարհի տարածքին հարիւր հազար քիլոկրամի չափ ծաղիկ ու վարդ մենք աղբը պիտի թափենք առանց մտածելու, որ 25 Ապրիլի առաւօտը ինչ ծանր կերպով պիտի յօրանջենք մեր երազներուն համար:

Այս վիճակներէն դուրս ելլելու իրական ճամբան մեզի Հայաստանի երիտասարդութիւնը ցոյց պիտի տայ:

Միայն, թէ մենք Յեղասպանութեան յիշատակը աղբ կուտակելու առիթի չվերածենք: Միայն, թէ մենք հասկնանք, որ թոյն սիւնելը չի բուժեր մեր վէրքը: Միայն, թէ մենք հասկնանք, որ պէտք է լրջութեամբ պահենք յիշատակը ու սուղը հանենք մեր մարմնէն: Մեր մարմնէն հանենք սուգի հինցած դիակը որուն ծանր հոտը կը կտրէ մեր քիթերը եւ չ'արտօներ, որ մենք ուղիղ հայեացքով նայինք:

Աշխարհը կը փոխուի ու մենք ստիպուած ենք նոր պրիսմակով նայելու մեր շուրջ ընթացող դէպքերուն: Կարելոր է նաեւ ցեղասպանութեան 100-ամեակի յիշատակումը Պոլսոյ մէջ:

Գրեթէ 100 տարի ետք մենք այդ կարեւոր աւագանը կը վերադառնանք եւ պէտք է վերադառնանք: Այդ մասին այլ առիթով:

### ԱՌԱՋԻՆ ՅԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԸ

Շարունակում էք 7-էն

օր առաջ հայկական ծաղկասալլի կազմակերպիչները իրենց նպատակի իրագործման համար դեռ 110 հազար տոլարի կարիք ունենին: Բարեբախտաբար, վերջին օրերուն անոնք քանի մը նուիրատուութիւններ ստացան՝ ձգելով 90 հազար տոլարի ընթացիկ մնացորդ: Անոնք, որոնք կը փափաքին լրացնել այդ պակասորդը, կրնան հարկային նուազեցման ներդրում ընել՝ այցելելով [www.aarfa.org](http://www.aarfa.org) կայքը:

Հաշուի առնելով ամերիկեան եւ միջազգային հեռատեսիլային լայն լուսաբանութիւնները՝ հայկական ծաղկասալլը ստացաւ բազմաթիւ դրական մեկնաբանութիւններ ամբողջ աշխարհի հասարակական լրատուամիջոցներու եւ կայքերու մէջ: Հեռատեսիլի որոշ ընկերութիւններ նոյնիսկ նշեցին, որ 2015 թուականը համընկաւ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին հետ:

Քանի որ հայ ժողովուրդը օտար շրջանակներու հետ փոխյարաբերութիւններուն մէջ յաճախ կը բարձրացնէ Յեղասպանութեան հարցը, օտարներու մեծ մասը հայ ժողովուրդին մասին գիտեն իբրեւ հալածանքներու ենթարկուած ազգ,

սակայն ծանօթ չեն անոր հարուստ մշակութային ժառանգութեան ու հնագոյն քաղաքակրթութեան: Աշխարհը պէտք է իմանայ, որ չնայած երիտթուրքերու շարմիր ջանքերուն՝ բնաջնջելու հայ ժողովուրդը, ան յաջողած է ոչ միայն գոյատեւել, այլեւ բարգաւաճիլ...

Ասիկա յատկապէս կարեւոր է հայ երիտասարդներու համար, որոնք պէտք է մեծնան դրական օրինակները ընդօրինակելով եւ հպարտանալով իրենց ժառանգութեամբ, այլ ոչ թէ իրենց զգան իբրեւ ոտնակոխուած զոհեր, որոնք խղճահարուցեցան կարիք ունին: Վարդերու շքերթի հայկական ընկերակցութիւնը հիանալի աշխատանք կատարեց՝ հայկական մշակութիւնը պանծացնելով եւ բարձրացնելով անոր վարկը ամբողջ աշխարհի մէջ:

Կազմակերպիչները, խանդավառուելով այս տարուան վարդերու մրցաշարին իրենց մասնակցութեան նկատմամբ հսկայական համաժողովրդական արձագանգէն, խոստացած են այսուհետեւ ամէն տարի հայկական ծաղկասալլով մասնակցելու Փասատինայի ամենամեայ շքերթին...

Թարգմանութիւնը կատարեց Ռուզաննա Աւագեան

### «ԿԵԱՆՔ ԶԿԱՅ...»

Շարունակում էք 16-էն

ձին ու անոր վրայ: Թէ՛ զաղութ մը կազմաւորելու եւ միաւորելու համար անհրաժեշտ է կառուցել նախ եկեղեցին եւ անոր կողքին դպրոցը: Այդ օրը վեհափառ հայրապետին «յիշեցումը» մեզի կը մեկնի այս տուեալներէն: «Հայը իր տունը շինելէն առաջ եկեղեցին շինեց, որովհետեւ հաւատաց իր կենդանութեան եկեղեցւոյ միջոցով»:

Հոս արժէ բանալ փակագիծ մը, որովհետեւ Ապու Տապին ու Արաբական ծոցի տարածաշրջանը ունին նաեւ իրենց իւրաքանչիւրութիւնները:

Քրիստոնէական ներկայութիւնը եւ եկեղեցին՝ Արաբական ծոցի տարածաշրջանին մէջ, ունին իւրաքանչիւր պիտակ: Արդարեւ եկեղեցին ու անոր գործունէութիւնները «ամփոփուած» են որոշ հողաշերտի ու տարածքի մէջ, եւ՝ պատշաճեցուած այս տուեալներէն մեկնելով: Այս իմաստով, այս ամփոփումն ու անոր պատշաճեցումը քաջալերած է եկեղեցիներ՝ ընդհանրապէս համիւժուելու եւ միասին գործակցելու: Այս իրական է նաեւ հայկական գաղութին համար, ուր եկեղեցին կ'անուանուի որպէս «Հայկական եկեղեցի» (Ալ-քանիսէ ալ-արմանիէ): Եւ այս հայկականը ստեղծած եւ եղած է «հաւաքական տուն»՝ եկեղեցիին միջոցով, ուր ամբողջ հայութիւնը կը մէկտեղուի անոր շուրջը: Ամբողջ հայութիւնը պիտի ընդգրկէ տարբեր հայկական համայնքային-եկեղեցական պատկանելիութիւններ, որոնք պահելով հանդերձ իրենց ինքնութիւնը, մէկտեղուած են «Հայկական եկեղեցի» շուրջը եւ անոր մէջ եւ միասին կ'ապրին ու կը գործեն...: Եւ այ

գաղութին ու անոր հաւաքական կեանքին առաջնահերթութիւններէն մէկն է, ուր հայը կ'ապրի հաւաքական «հասկացողութեամբ», նոյնինքն հաւաքական «տան» մէջ...

Բայց արդեօք այս չէ՞ հայուն ապրելու եւ գոյատեւելու մղիչ ուժը: Ստեղծել հաւաքական «հասկացողութիւն»-ը եւ զայն դնել հաւաքական «տան» ու «երդիքի» տակ...: Ու տակաւին, եւ ինչպէս վեհափառ հայրապետը շեշտեց, որ այս տունը, իմա եկեղեցին, «պատմութեան արհաւիրքներուն դիմաց մնաց զօրեղ», որովհետեւ հայը այս եկեղեցիով եւ անոր դաստիարակած եւ ներշնչած յոյսովն է, որ ապրեցաւ, վերապրեցաւ եւ մնաց «զօրեղ», իսկ «կեանք չկան» դարձաւ մարտահրաւէր՝ զայն վերածելով «ընելու» եւ «ըլլալու» կեանք մը, բայց մանաւանդ՝ «ապրելու»...

Ապու Տապիի Սրբոց Նահատակաց նորաշին եկեղեցիով տեղական հայկական փոքր «գումարտակը» կառուցեցաւ կեանքին մէջ «ապրելու» եւ «ըլլալու» տեսլականին: Անոնք այս եկեղեցիին ու անոր նորակառուց շէնքին մէջէն տեսան «յոյս»-ը...: «Յոյս»-ը, թէ հայը պիտի ապրի իր հաւատքով եւ ազգային ինքնութեամբ:

Աշխարհատարած հայուն ժառանգած կտակն ու պատուէրն է ստիկա:

Եթէ «կեանք չկայ», բայց կայ վճռակամութիւնը զայն «ընելու» եւ «ապրելու»:

Որովհետեւ հայը որոշած է ապրիլ Ապու Տապի եւ ամէն տեղ, եւ ապրիլը յոյսով ու հաւատքով է:

Եւ այս յոյսին ու հաւատքին կառուցելով է, որ հայուն համար «կեանքը (չ)կայ»...

### ՇՆՈՐՀԱՇԱՏ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ՝ ՄԱՅՔ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Շարունակում էք 8-էն

առթող բնակարանները: Մենք այդ հաստատ համոզումն ունեցանք հայ նկարիչներու հաւաքական ցուցահանդէսի ընթացքին: Մայք իր մասնակցութիւնը բերած էր քանի մը ստեղծագործութիւններով, որոնք այցելուներու ուշադրութիւնը գրաւած էին իրենց ինքնատարութեամբ եւ արեւաշող գոյներու գեղեցիկ համադրումով:

Մայքի համար ներշնչումի աղբիւր եղած են Միջերկրական կապոյտ ջուրերն ու մերձակայ քաղաքները, իրենց նեղլիկ փողոցներով եւ շուկայական տեսարաններով: Բնանկարներուն գուգահեռ իր կտաւներուն մէջ առկայ են տպաւորապաշտ դպրոցի եւ իրապաշտ կեանքի մը արտացոլումները:

Անցնող տարեկերջին Մայքի կողմէ գեղարուեստասէր հասարակութեան հաճելի նորութիւն մը հրա-

պարակուեցաւ: «Մայք Յակոբեան» անունը կրող գունաւոր առանձնատիպ ալպոմ-գրքույկ մըն էր: Ընթերցողը հոն կը ծանօթանայ Մայք Յակոբեանի հակիրճ կենսագրութեան, գեղանկարչութեան մասին իր ունեցած տեսութեան, ինչպէս նաեւ հոն ներկայացուած տասնեակ մը գործերուն: Այստեղ կը տեսնենք իր «գեղեցիկ, լուսաւոր, պայծառ ու վճիռ» պատուներէն որոշ նմուշներ: Մայքի ուշադրաւ գործերէն են «Բնանկար-1991»-ը, «Տեսարան Պէյրութէն-2000», «Քասախ Ծովափ, Ֆրանսա-2001» եւ այլ ստեղծագործութիւններ:

«Լոյսի եւ ուրախութեան նկարիչներ»-ու շարքին կարելի է դասել նաեւ Մ. Յակոբեանը, որպէս Գալիֆորնահայ ժամանակակից նկարիչներու փաղանգի մէկ նոր անդամը:

Բարի ե'րթ եւ նորանոր յաջողութիւններ սիրուած արուեստագէտին:

Գ. ՄՈՒՆՅԵԱՆ

### ՊԱՇՏՕՆՆԵՐՈՒ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Շարունակում էք 8-էն

2015 թուի Յունուար 23ի երեկոյեան ժամը 7:00ին Վէյն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ Սրբազան Հայրը պիտի կատարէ քահանայութեան «Կոչման Կարգ»ը, իսկ Կիրակի, Յունուար 25ի առաւօտ Սրբոց Ղեւոնդեանց

Մայր Տաճարին մէջ իր մատուցած Սուրբ Պատարագի ընթացքին զինք քահանայ պիտի ձեռնադրէ եւ օծէ՝ նոր անուն մը տալով իրեն:

Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ Նորընծայ Տէր Հայրը Հոգեւոր Հովիւր պիտի նշանակուի Սագրամէնթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՍԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ՇԵՆԱԿԱՅՆԵԼ (626) 797-7680**

**ԽՆԱՍԱԿԱԼ ԿՈՒԶՈՒԻ**  
 Թահանկայի շրջանին մէջ, Տիկնոջ մը համար  
 խնամակալ կ'ուզուի:  
 Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել  
 (818) 875-8021 թիւին:



### ՇՈՒՓՍԻՄԷՆՏ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ-ՖԵՐՄԱՆԵԱՆ)

Լուլու (Խայեան-Ֆերմանեանի մահուան տասնչորրորդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 25 Յունուար, 2015ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝  
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան  
Վիզէն Գուլումճեան

### ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՈՒՓՍԻՄԷՆՏ ԼԱԶՆԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան կը յայտնեն իրենց խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:

Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

### ՅԻՍՆԱՄԵԱԿԷ՝ ՅԻՍՆԱՄԵԱԿ

Ծարունակուած էջ 15-էն

ձայնն ու արձագանգը այդ տարի կը տարածուէին Պէյրութի Քամիլ Շամուն մարզալանին մէջ հաւաքուած 60 հազարի հասնող բազմութեան մինչեւ Երեւանի փողոցները ցոյցի ելած եւ ի լուր աշխարհի «մե՛ր հողերը, մե՛ր հողերը» պոռագող հայրենի բազմութիւններուն: Արդարեւ, Առաջին անգամ ըլլալով կը զգային թէ չի կար այլեւս հալչպահայ, պէյրութահայ, պարսկահայ, ֆրանսահայ, կուսակցական եւ յարանուանական պատկանելիութեամբ իրարմէ գատուած ժողովուրդ մը: Կա՛ր հիմա պահանջատէր եւ միակամ հայ ժողովուրդ մը, որ սփիւռքէն մինչեւ Երեւան արդարութիւն կը պոռար, արդարութիւն կը պահանջէր աշխարհէն:

Պատմութիւնը պէտք է արձանագրէ ու ըստ այնմ գնահատէ, որ այդ արդարութեան կանչի ու պահանջի առաջատար դիրքերուն վրայ կը գտնուէր այդ օրերու հայ երիտասարդութիւնը: Արդարեւ, Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակի ոգեկոչումը 1965ին ի յայտ կը բերէր հայ երիտասարդութիւն մը, որ մինչ այդ անտեսանելի մնացած էր ազգային կեանքի պատարաւին վրայ: Այս երիտասարդութիւնը յանկարծ մէջտեղ կու գար եւ ըսելի՛ք ունէր:

Այս կապակցութեամբ պատահումներ արդի՞ւնք էր արդեօք երբ Սէրգէյ Մերկելեան Պոմպէյի մէջ կազմակերպուած Ապրիլեան 1965ի այդ սգահանդէսին հարց կու տար թէ «արդեօք երիտասարդներէն ոեւէ մէկը չէ՞ր ուզեր բան մը ըսել»: Արդեօք ինք այդ զարգացումը տեսած էր, ու ըստ այնմ գնահատած անոր ծաղկումը երբ ուրիշներ այդ մասին իսկ չէին մտածած տակաւին: Սէրգէյ Մերկելեան կարծէք մարգարէական հարցադրում մըն էր որ կ'ուղղէր հայրութեան այդ պահուն երբ մտիկ ընելէ ետք տարեցներու ճառերն ու

ուղերձները հարց կու տար թէ ո՞ւր էին հայ կեանքին պատկանող երիտասարդները եւ թէ միթէ անոնք ըսելիք մը չունէին:

Այո՛, երիտասարդները ըսելիք ունէին: Ու այդ երիտասարդութիւնը իր ինքնուրոյն ձայնով եւ ներկայութեամբ կ'ուզէր բեմ բարձրանալ ու բարձրացա՛ւ: Տարբեր երիտասարդութիւն մըն էր, տարբեր պայմաններու ծնունդ եւ տարբեր մտասեւեռումներով հասունցած: Հայ երիտասարդութիւն մըն էր, որ ինքզինք ձերբագատած էր մինչ այդ տիրող արուեստական, գաղափարախօսական, յարանուանական եւ կուսակցական բաժանումներէ եւ տարակարծութիւններէ ու քով քովի եկած էր վերջ տալու այդ գաղափարախօսական բաժանումներուն, որոնք հայրութիւնը ջլատած ու անկարող դարձուցած էին ազգային գետնի վրայ:

Այդ սերունդը նախ հերքեց, մերժեց եւ ապա մէկդի շարժեց այն գաղափարը, որ տեսակ տեսակ հայրութեան եւ գաղափարական թշնամանքներու պատճառով իրարմէ գատուած հայրութիւն մը ստեղծուած էր յետ-եղեռնեան շրջանին:

Այս երիտասարդութիւնը վերջ դրաւ այդ ազգամիաս երեւոյթին: Այդ հիմնական գարգացումը պատահականութեան արդիւնք չէր, այլ մաս կը կազմէր սփիւռքի կազմաւորման եւ զարգացումին: Հասկնալի էր որ Մեծ Եղեռնին յաջորդող տասնամեակներու սփիւռքը «գլուխէն գարնուած» վիճակի մէջ գտնէր ինքզինք: Ծանր էին մեր կորուստները ամէն մարզերու մէջ: Եղեռնի եւ անոր յաջորդող սերունդներու հիմնական մտասեւեռումը եղաւ իբրեւ ազգ ու ժողովուրդ՝ ապրի՛լ, գոյատեւել՛ ու վերակառուցել: Պէտք էր ֆիզիքական գոյութեան տարրական պայմանները ստեղծել եւ հոգեմտաբարական պէտքերը հոգալ, միաժամանակ յարմարելով այլազան եր-

կիրներու պայմաններուն: Այս միջոցին է որ ստեղծուեցան ազգային դպրոցները, ակումբները եւ եկեղեցիները, որոնք ուժեղացող սերունդին հոգին եւ միտքը մշակեցին եւ պատուաստեցին հայկականութեամբ, միաժամանակ շրջապատի կեանքին ծաւալումները ընկալելու ատակ հոգեբանութեամբ մը օժտելով զայն: Այդ սերունդը կրցաւ օտար պայմաններու մէջ վերակառուցել իր ազգային կեանքի կարեւոր հիմնարկներն ու այդ համեստ հաստատութիւններէն մեր ժողովուրդի ապագան կերտել: Նախաինամական առաքելութիւն մըն էր սա, որ վերապրողները կրցան յաջողութեամբ գործադրել եւ իրագործել:

Յետ-եղեռնեան հանգրուանը սակայն ի յայտ բերաւ նաեւ ներքին հակասութիւններ, տկարութիւններ եւ տարակարծութիւններ հայ սփիւռքի կեանքէն ներս որոնք թունաւորեցին ազգային միջոցառումը:

Վերակառուցումէն ետք փոխանակ կենդրոնանալու հայ դատի պահանջատիրական աշխատանքներուն հետապնդումին վրայ, սփիւռքը ինքզինք սպառեց կուսակցական պայքարներով եւ եկեղեցական վէճերով, որոնք Լիբանանի մէջ յանգեցան 1958ի եղբայրասպան կռիւներուն եւ սպանութիւններուն:

Ահա այս անընդունելի կացութեան դէմ է որ ընդվզեցաւ ժամանակի հայ երիտասարդութիւնը ու բեմ բարձրացաւ իր խօսքը ըսելու: Ան միջոցը գտաւ շրջանցելու հաստատուած արգելքները եւ պատուարները եւ հաստատելու փոխադարձ հասկացողութեան միջոցառումը կողմերուն միջեւ եւ երիտասարդութեան շարքերուն մէջ, որ ի վերջոյ յանգեցաւ միասնական ճակատի մը ստեղծումին եւ ապա հայ դատի աշխատանքներու ծաւալումին եւ զարգացումին: Ատոր արդիւնքը տեսանք Ապրիլ 1965ին: Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակին առիթով համահայկական առաջին պոռթկումը կը պարտինք ա՛յս երիտասարդութեան, որ կառուցացին փոխակերպումով գիտցաւ հայ կեանքը յեղաշրջել եւ սփիւռքի զարգացումը դնել նոր հունի մէջ: Զգացական ճառերէն անդին աշխատանքային նոր մտասեւեռում մը եկաւ մէջտեղ ուր յաջողութեան նախկին արժեք չափերը փոխարինուեցան պահանջատիրական գործնական քայլերու ծրագրումով:

Այդ շրջանի գարգացումները չէն արժանացած տակաւին պատմական լուրջ վերելք ունի եւ ուսումնասիրութեան լաւագոյն ըմբռնելու անոր տարողութիւնը սփիւռքի կեանքի փոխակերպումի տեսակէտէն: Այդ շրջանի փոխակերպումները պատմական կարեւոր գարգացումներ են որոնցմէ կարելի է եւ պէ՛տք է օգտուիլ սփիւռքի ապագայ ընթացքը որոշելու համար:

\*\*\*

Ու հիմա Հայոց Յեղապահութեան Յիշատակումի Երրորդ Յիսնամեակի շեմին, կ'արժէ հարց տալ թէ ինչ պիտի ըլլայ ապագայի ընթացքը եւ զարգացումը՝ Հայ Դատի արժեւորման եւ լուծումի հաւանականութիւններու տեսակէտէն:

Անցնող երկու յիսնամեակներուն յստակ եւ տարբեր զարգացումներ ապրեցանք իւրաքանչիւր շրջանին, անցնելով սգահանդէսներու տարեկան կազմակերպութեան՝ հասնելու համար ձեւաւոր-

ուած պահանջատիրութեան մը գիտակցութեան արտայայտութեան: Երկար եւ դանդաղ եղաւ այդ ուղին, բայց վերջապէս Հայ դատի պահանջատիրութեան հետ կապուած աշխատանքները կենդրոնական տեղ մը եկան գրաւելու սփիւռքի եւ հայ ժողովուրդի ներքին կեանքի եւ արտաքին յարաբերութիւններու աշխարհներուն մէջ ու նոր գործեյակերպ մը երեւան եկաւ:

Սակայն ասկէ անդին եւ ասկէ վերջ ի՞նչ գարգացումներով պիտի յատկանշուի այս նոր հանգրուանը եւ ի՞նչ ուղղութիւն պիտի ստանայ:

Ո՞ւր կրնան տանիլ պահանջատիրութեան աշխատանքները եւ ի՞նչ պիտի գործնական արդիւնքի կրնան յանգիլ անոնք ի վերջոյ:

Սերնդային շարունակականութեան տեսակէտէն ո՞վ պիտի ըլլայ պահանջատէր:

Յիսուն տարի ետք, 1965 թուականին Սէրգէյ Մերկելեանի տեսլականի համազօր դրած հարցադրումը բանականութեան իսկ օրէնքով վաւերական կը մնայ ե՛ւս այսօր:

«Արդեօք երիտասարդներէն ոեւէ մէկը չուզէ՞ր բան մը ըսել»: Կասկած չի կայ թէ հայ երիտասարդութիւնը թէ՛ սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի մէջ ըսելիք ունի՛: Կասկած չի կայ նաեւ թէ ան սերնդային շարունակականութեան կարգով իր բնական դերը պիտի խաղայ մեր ժողովուրդի ապագայի տնօրինումի տեսակէտէն:

Կասկած չի կայ թէ հայ երիտասարդութիւնը իր ազգային խմորումով, գիտակցութեամբ, իր ուսումնական, ասպարէզային եւ աշխարհաքաղաքացիական փորձառութեամբ բեմ պիտի ելլէ ազգային կեանքը իր հասկացողութեամբ եւ դատումով խմորելու համար:

Հաւանական է եւ մաղթելի՛, որ այս երիտասարդութիւնը նոր ուղղութեամբ տանի մեր ազգային կեանքը, ընդգրկելով հարցերը դիտելու, քննարկելու եւ լուծումներ գտնելու օրինաչափային նոր գործեյակերպ մը եւ ձեւակերպում մը: Մաղթելի՛ է որ ան միաժամանակ չի վախնայ ազգային նոր հորիզոններ փնտրելու եւ գտնելու կարելիութիւններէն, աւանդական տրամաբանութիւնները հարցադրումի ենթարկելու պարտաւորութեանէն եւ միաժամանակ չ'երկնչի իր համաշխարհային շրջապատի ընձեռած քաղաքացիական իրաւունքներու, հնարաւորութիւններու եւ միջոցներու պարգեւած հարստութեանէն հայ կեանքը պատուաստելու իր դերակատարութեանէն:

Պարզապէս այն պատճառով որ այս երիտասարդութիւնը ինքը պիտի կազմէ Հայ ժողովուրդը ամէնուրեք, ինքը պիտի ապրի հայ կեանքը եւ ինքը պիտի տնօրինէ ապագայի ընթացքը:

Եթէ մեր շուրջը ուշադրութեամբ դիտենք պիտի տեսնենք արդէն որ տարբեր մտայնութեամբ, հասկացողութեամբ եւ մտահորիզոնով մեծցող երիտասարդութիւն մը կը ձեւակերպուի մեր շուրջը եւ հետեւաբար զարմանալի պիտի ըլլայ որ Հայ կեանքը ընդհանրապէս եւ Հայ Դատի հասկացողութիւնն ու հետապնդումը տարբեր հանգրուան մը մտնեն 2014 թուականէն ետք եւ տարբեր ընթացք մը ստանան: Տարբեր ընթացք մը, որ պահանջատիրութիւնը կը գործնականացնէ՛:

Տարբեր ընթացք մը, որ լուծումի կ'առաջնորդէ՛: Տարբեր ընթացք մը, որ արդարութիւնը կը հաստատէ՛ համամարդ կային չափանիշով:



